



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

83.092

←-44



ՅԱՅՏՆԻ ՍԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

03 AUG 2005

ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՍԵԱՆՑԻ

83.092

2-44

02 NOV 2009

Հ Ա Ո Ւ Պ Տ Մ Ա Ն

(ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)



Կ Ա Ջ Մ Ե Ց Լ ՚ Թ



1 պատկերով:



Ս.-ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1902

9637

110

10 5 MAR 2013

RUSSIAN POST

481

Дозволено цензурою. С.-Петербургъ, 12 Февраля 1902 года.



(348-90)
(82554-илл)
(2849 /
41

2356-91

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.





Գ. ՀԱՍՈՒՊՄԱՆ.

Die Dichter sind die Thränen der
Geschichte, Die heisse Zeiten mit Bogierde
schlürfen...

G. Hauptmann.

Ա.

Շլեզիայի կուրորաների շարում մեծ հռչակ
էր վայելում Օբերզալցբերունը: Գեղեցիկ է նա իր
դիրքով, զրաւիչ է ձոխ բուսականութեամբ: Բնու-
թեան այդ գեղեցիկ վայրում 1862 թ. նայեմբերի
15-ին ծնուեց Գերհարդ Հաուպտման *): Նրա նայրը՝
Րօբերտ Հաուպտմանը «Zur Preussischen Krone»
հիւրանոցի տէրն էր և յայտնի էր իր կարգապահու-
թեամբ, մաքրասիրութեամբ ու ուղղամիտ բնաւորու-
թեամբ: Նրա մայրն էլ ունէր զգայուն սիրտ, զեղուն
զգացմունքներ և սէր ու գութ դէպի խեղճերն ու
ընկճուածները: Նա ջանասէր էր բառիս բուն նշա-
նակութեամբ և աշխատում էր զիշեր ու ցերեկ, կատա-
րում էր անային գործերը, օգնում էր ամուսնուն, խնամում էր երեխաներին:

*) Կենսագրական տեղեկութիւնները Հաուպտմանի
մասին քաղում ենք հետևեալ աղբիւրներից. 1) P. Schlen-
ther: G. Hauptmann, 2) A. Hanstein: G. Haupt-
mann, 3) A. Bartel: G. H. 4) U. Woerner: G. H.
5) A. Stern Studien zur Litteratur der Gegenwart

Ահա այդպիսի ծնողների հոգասարսթեան տակ մեծացաւ մանուկ Գերհարտը: Նա ունէր իրանից մեծ չորս քոյրեր և 2 եղբայրներ, բայց զրանցից տարբերուում էր իր բնաւորութեամբ: Նա գեռ եօթը տարեկան հասակում իր քոյրերի հետ սկսեց այցելել զիւղական դպրոցը, որի ղեկավարն էր Բրենդել անունով մի ուսուցիչ: Մանկավարժական տաղանդից զուրկ էր այդ ուսուցիչը, բայց զիտէր գրաւել իր սաներին, զիտէր քաղցրացնել նրանց օրերն ու ժամերը: Շատ անգամ նա տանում էր նրանց բացօդեայ զբոսանքի, շատ անգամ թափառում էր նրանց հետ դաշտերում ու անդաստաններում, սարերում ու ձորերում: Դժբաղդաբար այստեղ ոչ միայն ազատ բնութեան գեղզեղանքն էր մատաղ սաներին զբաղեցնողը, ոչ միայն թռչունների քաղցր դայլայլիկը, միջատների միակերպ բզզոցը և ծաղիկների անուշ բուրմունքն էր նրանց մտքին ու սրտին անունդ տողը, այլ և չոր ու ցամաք լատիներէնն իր քերականական կանոններով: Ուսուցիչը մերթ ընդ մերթ բացատրում էր այս կամ այն կանոնը և ապա կրկնել տալիս: Իսկ փոքրիկ Գերհարտը ատում էր այդ պարապմունքը: Նրա համար աւելի գրաւիչ էին հին հայրական գրադարանի բնազիտական ոսկեզօծ գրքերը, քան թէ դպրոցական բառարանն ու քերականութիւնը: Նա ամենավատ աշակերտներից մէկն էր...

1874 թուականին նրան ուղարկեցին Բրեսլաւ եղբայրների մօտ, որպէսզի պատրաստուի և մանի աեղական ընթացական դպրոցը: Սակայն այս

աեղափոխութիւնը և այս նոր դպրոցը աւելի վաս ազդեցին Գերհարտի վրայ: Տարիներն անցնում էին միմիանց յետեից, բայց նա չէր առաջողւում, դասարանը չէր փոխում: Ուսուցիչները չէին կարողանում թափանցել նրա հոգու մթին խորքը, իսկ ինքը՝ գեղջուկ երեխան, չէր հոսկանում ուսուցիչներին, չէր ըմբռնում քաղաքային բարդ կեանքն ու յարաբերութիւնները: Դպրոցական ընկերներն էլ ծաղր ու ծանակի առարկայ էին դարձնում նրա վաղաժամ ցնորքներն ու վառ երեւակայութիւնը:

Նրա մեծ եղբայր Կարլը նկատում էր այս ամենը և յուսահատ կերպով մտածում, թէ արդեօք ի՞նչ է լինելու նրա բողբոջն ու վիճակը... Բայց անողբ ձակատագիրը ինքը վճռեց այդ ծանր հարցը:

Բօբերտ հաուպտմանի գործերը շատ անաջող էին գնում: Շլեցիայում աիրող ազգային երկպառակութիւնները հետզհետէ սուր կերպարանք էին ստանում: Լեհացի մտղնասաները այլևս չէին յաճախում Օբերզալքբունը: Հազորդակցութեան յարմար և էփան միջոցների շնորհիւ, նրանք աւելի հեռաւոր աեղեր էին գնում, գերմանացիներից աւելի հեռու մնալ էին աշխատում: Եւ «zur Preussischen Krone» հիւրանոցի լայնարձակ դահլիճներն ու սենեակները դատարկ էին մնում: Սյդպիսի ձախտող հանգամանքների պատճառով հաուպտմանի պարտքերը աւելանում էին, այնպէս որ վերջ ի վերջոյ նա զրկուեց իր ամբողջ ունեցուածքից և դատարկաձեռն հեռա

ցաւ Օբերդալցբրունից: Նա երկաթուղու կայարանի կապալառու դարձաւ:

Նիւթական միջոցների սղութեան պատճառով նա ստիպուած էր դպրոցից հանել Գերհարտին: 1878 թ. ապրիլ ամսին վերջինս հեռացաւ Բրեսլաուից, իր հետ վերցնելով ստացած վկայադիրը, որ մսիթարական շատ քիչ բան էր պարունակում իր մէջ:

Սյստեղ որոշուած էր նրա վարքը — լաւ, աշխատասիրութիւնը — բաւարար, իսկ ընդունակութիւնն ու ուշադրութիւնը — մի հասալիկ միաւոր: Միւս առարկաներից լաւ էր միայն նկարչութիւնը: Արդեօք ի՞նչ կարող էր դառնալ այսիսի պատանին:

Նրա դպրոցական ատարակների մէջ կային բազմաթիւ լրիւքական ոտանաւորներ, որոնց վրայ նշմարւում էր Անդերսէնի ուժեղ ազդեցութիւնը: Քիչ չէին դրանց մէջ այնպիսի ոտանաւորներ, որոնցից բանաստեղծական շնորհք էր բուրում: Գերհարտի եղբայրը՝ Կարլը կարդում էր այդ ատարակները, այդ վաղաժամ բանաստեղծութիւնները և ինքն իրան մտածում, թէ արդեօք հնարաւոր է, որ տասնեւհինգ տարեկան մի պատանի, առանց ընդունակութեան, առանց նոյն իսկ միջնակարգ կրթութեան, զրական ասպարէզ մանի, հեղինակ դառնայ:

Բայց հայրը թոյլ չտուէր, որ ազատութիւնն ու ժամանակը լուծէր այդ հարցը: Նա Գերհարտին շուտով ուղարկեց Շտրիգաուր, որտեղ նրա քենակալը՝ Շուբերտը երկու կալուածքների կառավարիչ

էր: Սյստեղ Գերհարտը պիտի օգնէր Շուբերտին և ապրէր նրա տանը, նրա հսկողութեան տակ: Եւ նա մեծ ուրախութեամբ դիմեց դէպի նոր բնակավայրը, որովհետեւ յոյս ունէր այնտեղ վայելել մաքուր օդ ու լոյս, ազատ կենցաղ ու հանգիստ:

Գերհարտը միանգամայն հասաւ իր նպատակին, դտաւ իր սպասածները և դրանց հետ միասին մայրական խնամք ու հոգատարութիւն ամբողջ ընտանիքի կողմից: Սյստեղ էին նրա երկու մօրաքոյրերը, որոնցից մէկը հիանալի երգում էր, իսկ միւսը ածում էր դաշնամուրի վրայ: Շատ երեկոներ հաւաքւում էր ամբողջ ընտանիքը և ունկնդիր լինում այդ հմայիչ երաժշտութեանը, այդ գրաւիչ երգեցողութեան: Գերհարտն էլ այդ ժամանակ լուռ ու մունջ նստում էր ու լսում, լսում էր ու աւելի մնայլւում: Երաժշտութիւնը բաց էր անում նրա զգայուն սիրտը և առաջ քաշում բանաստեղծական նաւբը ձգտումները: Անհասկանալի թախիծը մեծանում էր օրէցօր և կտրում նրա հանդիստը: Գիւղական կեանքը այլ ևս բաւականութիւն չէր տալիս նրան, նա ձգտում էր դէպի հեռուն, դէպի մի անորոշ նպատակ...

1880 թ. նա վերադարձաւ Բրեսլաւ և իր եղբօր ջանքերով ընդունուեց «Գեղարուեստից դպրոցի» նախապատրաստական դասարանը: Բայց այստեղ էլ նրա բաղդի անիւր չբանեց. այստեղ էլ նա չկարողացաւ ցանկալի առաջադիմութիւնը ցոյց տալ և 1881 թ. դպրոցից արձակուեց: Դրանից յետոյ նա մի տարի էլ աշխատում

էր իր հովանաւոր՝ քանդակագործութեան պրօֆէսօր Պերատելի մօտ, որը կարդացել էր նրա ձեռագիր բանաստեղծութիւնները և աշխատում էր ամեն կերպ զարկ տալ նրա տաղանդին ու մտաւոր զարգացման: Սյոյ միենոյն հովանաւորի շնորհիւն էր, որ նա 1882 թ. ընդունուեց Յնայի համալսարանը իբրև պատմութեան ուսանող: Նոր կեանքը, նոր միջավայրը ունեցաւ զօրեղ ազդեցութիւն: Գերհարար ջերմ կերպով հետաքրքրուել սկսեց բնագիտական ու հասարակական դիտութիւններով: Գարվինն ու Կարլ Մաքսը նրա ընթերցանութեան ամենասիրելի նիւթերն էին: Գարվինիզմն ու Մարքսիզմը նրան ամենից շատ զբաղեցնող հարցեր դարձան:

Բայց այդ նոր գրութիւնն էլ չկարողացաւ նրա հոգեկան թախիծը փարատել, նրա մելամաղձօտութիւնը վերայնել: Նա որոշեց երկար ճանապարհորդութեան մէջ որոնել հանդիստ ու խաղաղութիւն, եղաւ համբուրգ, որտեղ նրա մեծ եղբայրը՝ Գէորգը ամուսնացել էր և առևտրական գործ սկսել և այդտեղից նաևով ճանապարհ ընկաւ դէպի Միջերկրական ծով: Սպանիայի և Իտալիայի նաւահանգիստներն այցելելով նա հասաւ Բիվերա, որտեղ նրան սպասում էր Կարլ եղբայրը: Սյուսեղից երկու եղբայրները միասին շարունակեցին ճանապարհորդութիւնը: Նրանց գրաւում էր Իտալիան իր բնութեան զեղեցիկ տեսարաններով: Սակայն նրա կլիման վատ ազդեց Գերհարարի առողջութեան վրայ, ուստի երիտասարդ ճանապարհորդները ստիպուած էին օր առաջ վերադարնալ Գերմանիա:

Սակայն այդ բանաստեղծական երկրի թողած տպաւորութիւնները այնքան խորը, այնքան ուժեղ էին, Գերհարարի ձգտումը դէպի գեղարուեստը այնքան եռուն էր, որ նա երկրորդ անգամ այցելեց Իտալիան և այս անգամ նոյն իսկ քանդակագործութեան մի արհեստանոց հիմնեց հովմում: Բայց նրան վիճակուած չէր մնալ այդտեղ: Վերահաս ծանր հիւանդութիւնը նրան նորից տարաւ հայրենիք և յանձեց սիրեցեալ նշանածի՝ Մարիայի խնամքին: Անցան հիւանդութեան օրերը և Գերհարար պսակուեց (1885) Մարիայի հետ, կազմելով մի երջանիկ զոյգ: Կնոջ բաժինքը հնարաւորութիւն տուեց հաուպամանին հեռու մնալ նիւթական հոգսերից, առօրեայ կարիքներից և ամբողջապէս նուիրուել գրականութեանը: Սրդէն անցել էր զեզերումների շրջանը, արդէն պարզուել էր, որ հաուպամանի կոչումը բանաստեղծութեան մէջն էր: Գեռ ուսանողութեան շրջանում, զեռ իր ճանապարհորդութեան ժամանակ բանաստեղծօրէն արտայայտում էր իր զգայմունքներն ու տպաւորութիւնները, գրում էր լիրիքական ոտանաւորներ, բայց զրանք չէին նրան հռչակ պարգեւողները, այլ յետագայ գրուածքները՝ գրամաները:

Բ.

Բանաստեղծում էր հաուպաման, բայց անհասկանալի էին նրա բանաստեղծութեան մթին մաքերը: Բոլոր ոտանաւորների մէջ աչքի էր ընկնում միայն մի ընդհանուր զիծ, մի ընդհանուր առանձնայատ-

կութիւն, դա հեղինակի զգայուն սիրան էր, որ միշտ թեքւում էր դէպի թշուառների, ընկճուածների կողմը, դա նրա զեղուն զգայմունքներն էին, որ միշտ դուրս էին թռչում յանուն արգարութեան, յօգուտ խեղճերի, անօգնականների:

Եւ այդ բանում շատ մեծ դեր էին խաղում մանուկ հասակում ստացած տպաւորութիւնները: Իեռ Օրերդպրբունում եղած ժամանակ նա տեսնում էր հասարակական կեանքի անհաւասարութիւնը, տեսնում էր մի կողմում իր հօր հիւրանոցի հարուստ յաճախորդներին, իսկ միւս կողմում հարեան գիւղերի աղքատիկ գիւղացիներին. մի կողմում շոպյութիւն ու փարթամութիւն, իսկ միւս կողմում ծայրայեղ չքաւորութիւն ու խեղճութիւն... Տեսնում էր այդ ամենը և իր սրտի խորքում աննկատելի կերպով արմատացնում ատելութիւն դէպի հարուստներն ու ուժեղները...

Իպրոցում եղած ժամանակ նա պախարակում էր այն գիտութիւնները, որոնք հեռու էին կանգնած կեանքից ու իրականութիւնից, որոնք միայն սակաւաթիւ ընտրեալների սեփականութիւնն էին կազմում...

Սպանիայում և Իտալիայում ճանապարհորդելիս նա տեսնում էր բնութեան հարստութիւններն ու գեղեցիկ տեսարանները, բայց դրանց հետ միասին տեսնում էր և չոր հացի կարօտ, կարիքների տակ ձնշուած բնակիչներին և այդ ամենը խոր դրսւմ էր թողնում նրա փափուկ սրտում:

Ահա այդ հակադիր տպաւորութիւնների բովով են անցել նրա բանաստեղծութիւնները, դրանց ազդեցութեան տակ է գրուած «Promethidenlos» էպօսը:

Սելին անունով մի երիտասարդ է այդ գրուածքի հերոսը: Նա հեռանում է հայրենական տնից և ծովային ճանապարհորդութիւն սկսում: Նա դառնութեամբ է յիշում իր անցեալը, բռնակալներ է համարում իր դասախարակներին, որոնք միայն ոյժի բռնակալութեան միջոցով էին գործում: Նա մտայլ է և յուսահատ: Սակայն օգնութեան են հասնում երկու գեղանի կանայք, որոնք ուղղում են առաջնորդել նրան դէպի առաջ, դէպի ապագան...

Այդ կանանցից մէկը բռնել է ձեռքին փորիչ դուրը՝ դա քանդակագործութեան մուսան է, իսկ միւսը՝ շղարչն ու դափնեայ պսակը՝ դա էլ բանաստեղծութեան մուսան է: Խեղճուկ Սելինը տատանում է այդ երկուսի մէջ տեղը և չգիտէ որին հետեի, որի խորհուրդը կատարէ...

Սպանիա այցելելով, նա առաջին անգամ տեսնում է գեղև կեանքը, առաջին անգամ հասկանում է անառակ կանանց անբարոյականութիւնը: Զարոյթի հետ միասին նրա սրտում զարթնում է և յաւակցութեան զգայմունքը: Զարիքի ամբողջ յանցանքը նա զոյում է այն մարդկանց վզին, որոնք խաբուսիկ յոյսերով այդ կանանց դուրս են մղել բարոյական ճանապարհից: Նա որոշում է քարոզել մի նոր կրօն, մի նոր դաւանանք, որը իր հովանաւորութեան տակ առնէր և բախտազուրկ թըշ-

ւառներին և անառակութեամբ հալ ու մաշ եղած
կանանց: Նա հէնց նաւի վրայ սկսում է իր քարոզը,
բայց մարդիկ նրան չեն հասկանում, ամբողջ նրան
ծաղր ու ծանակի առարկայ է դարձնում:

Սելինը շանուբակում է իր ճանապարհը և հաս-
նում է մինչև Իտալիա: Սյստեղ էլ նա տեսնում է
սով ու աղքատութիւն, ծայրայեղ կարիք ու յուսա-
հատութիւն: Զգայուն սիրտը նորից վրդովւում է
ախրող անարդարութեան դէմ: Նա նորից վճռում
է թշուառների բախտին զոհել իր ջանքն ու եռանդը,
իր երզն ու կեանքը: Նա ուզում է բարձրանալ
մինչև «անյուսալիութեան ժայռը» և այնտեղից
քարոզել ճշմարտութիւնը: Բայց յանկարծ յուսահա-
տութիւնը տիրում է նրան և վարդազոյն երազը
մնում է անկատար: Զայրացած Սելինը ծովի ան-
դունդն է շարժում իր քնարը և միայնակ մնում:
Գալիս է բանաստեղծութեան մոլան և ջրասոյզ
քնարը երկինք է բարձրացնում: Իսկ Սելինը մնում է
գառարկաձեռն, մնում է յուսահատ ու յուսախաբ:

Սյստեղ հեղինակը յանդիմանում է Սելինին,
պախարակում է նրա թուլակամութիւնը և կարծես
դրանով ցոյց տալ է ուզում, թէ ինքը արդէն անցել է
այդ շրջանը, պատրաստ է «անյուսալիութեան
ժայռը» բարձրանալ, պատրաստ է միշտ իր մօտ
պահել քնարը և նրա լարերը հնչեցնել յանուն
արդարութեան ու ճշմարտութեան, յօգուտ թըշ-
ւառների ու հալածուածների:

Մի ուրիշ տեղ հառուպումն աւելի բնորոշում է
իր այդ պարտականութիւնը, գրելով.

Ես երզում եմ ազատարար *)
առանց խմբի պատկանելու:
Իմ ի՞նչ հոգն է ազատ կուրծքս
և ոչ մի բան չե կաշկանդում.
Կարողէն ինձ ջճանաչել
ինչպէս հիմայ, նոյնպէս յետոյ.
Բայց գիտակից նպատակիս
ես երզում եմ աներկբայ—
Ով երզում է ամեն մի բան՝
նա վստահ է ամեն բանի,
նա պատրաստ է նոյնիսկ մահուան
իր անկաշառ երգի համար:

Եւ իսկպէս հառուպման իր բեղմնաւոր գրչով
դարձրել է մի անվախ զինուոր, որ միշտ կռիւ է
մղում ցանկալի նպատակին հասնելու համար, որ
միշտ ասպարէզ է մտնում իր անկաշառ ձայնը
լսելի դարձնելու համար: Նա մեծ եռանդով ուսում
նասիրում էր էվոլյուցիայի և անտեսական մատերիա-
լիզմի թէօրիաները: Հետեւում էր հասարակական
հրատապ հարցերին, բայց և այնպէս մնում անկախ,
առանց միանալու այս կամ այն կուսակցութեանը:
Նա ուշե ուշով կարդում էր «պատմութեան որոտ
ու կայծակ» համարուող Շիլլերին, բայց չէր ենթար-
կւում նրա ազդեցութեանը:

Նրան աւելի դրաւում էր Բայրընը իր համաշ-
խարհային վշտով, Զօլան իր նկարագրած կեանքի

*) Ը. յս ստանաւորը զերմաներենից թարգմանել
է պ. Ը. Խասհակեան:

քսամենելի երևոյթներով: Սակայն այստեղ էլ պահպանուում էր իր ինքնուրոյնութիւնը:

Ահա այդ է պատճառը, որ մի զարմանալի բազմակողմանիութիւն է նշարւում նրա գլխաւոր գրքւածքներում, որ կարելի է բաժանել վեց զանազան կատեգորիաների. 1) նովելլաներ՝ «Bahnwärter Thil» և «Der Apostel», 2) սօցիալական դրամաներ՝ «Vor Sonnenaufgang» և «Die Weber» 3) ընտանեկան կեանքից վերջրած դրամաներ՝ «Das Friedensfest», «Einsame Menschen», «Fuhrmann Henschel» և Michael Kramer», 4) կոմեդիաներ՝ «Collega Crampton» և «Der Biberpelz». 5) պատմական դրամա՝ «Florian Geyer», վերջապէս 6-րորդ տեղը բռնում է նրա հեքիաթախտոն և միստիկական դրամաները՝ «Der Versunkene Glocke» և «Hannele»:

Գ.

Նովելլաների մէջ ժամանակակից կարգով առաջին տեղն է բռնում «Երկաթուղու պահապան Տիլը» — («Bahnwärter Thiele»), որը գրուած է 1887 թ.: Բարդ չէ այդ պատմուածքը, երկար չէ նրա բովանդակութիւնը, բայց չափազանց յուզիչ չափազանց խոր է նրա թողած տպաւորութիւնը:

Գլխաւոր հերոսը պահապան Տիլն է մի բարեւիրտ ու աշխատասէր մարդ: Նա միշտ ճշտութեամբ կատարում էր իր պաշտօնը, գնացքը մօտենալիս կանգնում է ճանապարհի կողքին և բաց անում կանաչ դրօշակը: Նկալով ու թանձր ծուխ արձակելով

անցնում է գնացքը, իսկ Տիլը վերադառնում է փայտե խուցը և նորից անձնատուր լինում իր մտածմունքներին, իր անցեալի տխուր յիշողութիւններին...

Տխուր է Տիլը, մշտական թախիծ են արտայայտում նրա աչքերը... Տարիներ առաջ մեռաւ նրա առաջին կինը՝ նիհարիկ, բարեսիրտ Մեննան: Մեռաւ նա, իր յետեւից յիշատակ թողնելով նորածին Տօբիասին: Տիլը նորից ամուսնացաւ, բայց երկրորդ կինը՝ Լենան չունէր ցանկալի զուժն ու բարեսրտութիւնը: Երկրորդ ամուսնութիւնը զուրկ էր հոգեկան կապից, միայն տուփանքն էր նրա հիմքը կազմում: Սյսպիտի պայմաններում ցաւալի էր փոքրիկ Տօբիասի վիճակը: Նա մեծանում էր առանց խնամքի, առանց մայրական գորովի, խորթ մայրը շատ յաճախ ծեծում էր նրան ու նեղութիւն տալիս. նրա կեանքը դառն էր ու չարքաշ:

Նկատում էր այդ բանը պահապան Տիլը և ասելի տխրում: Յաճախ նա նստում էր միայնակ, բայց էր անում աղօթագիրքը, գնում էր առաջը հանդուցեալ կնոջ պատկերը և երգում ու աղօթում, աղօթում ու պատկերին նայում: Սյդ բուպէին պատկերը դառնում էր նրա համար մի աստուածութիւն, մի պաշտելի սրբութիւն:

Ընտանեկան կեանքը չէր գրաւում Տիլին: Տօբիասն էր նրա միակ մխիթարանքը. հասալիկ կայտառ Տօբիասը: Եւ հողատար հօր մի հատիկ տենչանքն էր ծանապարհի վարպետ դարձնել նրան: Սյդքանն էլ մեծ բան էր նրա համար: Բայց անողոք ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել:

Աշնանային օր էր—սև ու մուխ օր Տիլի համար: Գիշերը շատ վատ երազ էր տեսել... Ցերեկն էլ նրա աչքին մերթ ընդ մերթ երևում էր Մեննայի դալուկ դէմքը և կարծես մի ինչ-որ բանի համար յանդիմանում:

Ահա նրա մօտ են կիներ ու երեխաները: Կայտառ Տօբիասը խաղում է, իսկ կիներ աշխատում: Տիլը նայում է շուրջը և աւելի մնայլւում: Ահա լւում է սողմանաւ զանդը, երևում է վիթխարի օձը՝ դնացքը: Տիլը վազում է իր տեղում կանգնելու, պայմանական դրօշակը ծածանելու:

Բայց ինչ սարսափ... Գնացքը յանկարծ կանգ է առնում... Դժբաղդութիւն, դժբաղդութիւն, լըսւում է այս ու այն կողմից: Մարդիկ վազում են դէպի բերանները: Վազում է և Տիլը և ինչէ տեսնում: Ճանապարհի մէջ տեղը կիսամահ ընկած է Տօբիասը: Գնացքը նրա վրայից էր անցել... Լսւում են ցաւակցութեան բայականութիւններ, լւում է շողեկաւքի շվոցը և դնացքը, փրթկալով ու հեւալով, նորից առաջ է շարժւում:

Մտում է Տիլը ձեռքերը ծոցում, դառն վիշար սրտում: Նրա աչքերը արցունք չեն թափում, բայց դրա փոխարէն մի կատաղի զայրոյթ են արտայայտում: Լաց է լինում նրա կիներ, բայց ո՞րքան անկեղծ է այդ լացը... Մտում է յուսոյ մի ջնջին նշոյլ՝ բժշկի օղնութիւնը: Բայց շուտով այդ յոյան էլ ոչնչանում է: Տօբիասն երեկոյեան աւանդում է հողին...

235-9/ 848-97

6482


Լուսանում է. հարեանները բողխում են Տիլի բնակարանի դուռը, բայց ձայն ծպտուն չի լսում: Ներս են մանում և ինչ չեսնում: յատակի վրայ արեան մէջ ընկած է անշունչ Լենան, իսկ նրա կշտին— խեղդամահ արած փոքրիկ երեխան: Հոպա այդ բոլորի յանցաւորը, հոպա Տիլը... Նա անհեապել է:

Որոնում են և գտնում Տիլին: Նա պառկած էր երկաթուղու բեխների վրայ—Տօբիասի կարմրաւուն գլխարկը ձեռքին: Կանչում են նրան, խօսում են հետը, բայց նա տեղից չի շարժւում, միայն մի դառն քրքիջ է արձակում: Նա դժուած էր...

Այդ փոքրիկ նովելայի բովանդակութիւնից երևում է, որ նրա գլխաւոր հիմքը հողերանական վերլուծութիւնն է, թէև պակաս չեն կենցաղադրական տեսարանները:

Իր ձեռով դրանից աւելի բարձր է Առաքեալը «Der Apostel», սակայն այստեղ էլ նիւթն է մուխ և միստիկական: Ահա դրա բովանդակութիւնը.

Մուխ երեկոյ էր: Ցիւրիտի հիւրանոցներից մէկը մտաւ մի ճանապարհորդ: Նա տարօրինակ տպաւորութիւն էր թողնում իր արտաքինով: Նա հազել էր սանդաղներ, իսկ շորի տեղ՝ վարդապետական մի սպիտակ վերարկու: Նրա գօտին մի հաստ թօկ էր, երկար մազերն էլ կասուած էին թելով: Նա նման էր առաքեալի: Այժմ աշխարհում սրբեր չկան, բայց նրա մէջ մի առանձին սրբութիւն էր նկատւում: Բնութեան ամեն մի երեւոյթ, ամեն մի առարկա դրաւում էր նրա ուշքն ու միտքը: Սողուն ու միջատ, ձուկ ու թռչուն, մարդ ու անասուն՝



ամենն էլ սիրելի էին նրա համար: Նա ոչ ոքի վնասել
չէր կարող:

Նա զիշերեց հիւրանոցի վերնայարկում, մի
փոքրիկ սենեակում, իսկ լոյսը բացուելուն պէս
ճանապարհ ընկաւ դէպի Գերմանիա: Երկաթուղին
ատելի էր նրա համար, ուստի դերադասեց ոտով
գնալ:

Ահա նա անտառումն է, կանաչազարդ ծառերի
մէջ: Անցեալի յիշողութիւնները զրաւում են նրա
միտքը: Նա անձնատուր է լինում իր մտածմունքնե-
րին: Նրա աչքի առաջ են Իտալիայի փոշոտ ճանա-
պարհները, նրա շուրջն ընկած են աղքատիկ խրճիթ-
ներ: Լուում են զանգակների մելամուղձիկ զողան-
ջիւնը: Նա գնում է ծարաւ ու քաղցած, յողնած
ու փոշիով ծածկուած: Ծանապարհի վրայ հաւաք-
ւած մարդիկ ծունկ են չոզում նրա առաջ և
տղթում: Իսկ նա բոլորին միայն մի բան է պատաս-
խանում, միայն մի խօսք է ասում՝ *խաղաղ—նիւն...*
Նրա շուրջը արեան հոտ է փչում: Կուում են
եղբայր եղբօր դէմ, քոյր քրոջ դէմ: Նա սիրում է
բոլորին էլ, ուստի հալ ու մաշ է լինում նրանց
կատաղութիւնը իմանալով, նրանց անզուսպ մաքա-
ռումը տեսնելով: Նա ուզում է երկնային որոտ
զառնալ և իր աճարկու ձայնով մարդկանց վրայ
սարսափ ազդել, կռիւն ընդհատել: Սյդ է նրա
վառվռուն աենչանքը, այդ է թելադրում նրա զգայուն
խիղճը: Նա զիտէ փրկութեան ճանապարհը՝ մայր
քնութեան միջոցով պէտք է գտնել նրան. նա ձգտում
է ու ասում.— Իուք ազաններ էք ու արբեցողներ:

Իուք խնջոյք էք սնում մարդակերների նման:
Իազարեցէք ոչնչացնել կենդանի էակներին: Թող
դաշտային պտուղները լինին ձեր կերակուրը: Վեր-
ցրէք ձեր մետաքսէ անկողինները, հանեցէք ձեր թան-
կաղին շորերը և կրակի ճարակ դարձրէք նրանց:
Սյդ բանն անելուց յետոյ հեռեցէք ինձ: Ես կտա-
նեմ ձեզ մի երկիր, որտեղ վազրն ու գոմէշը միասին
են ապրում, որտեղ օձերն առանց թոյնի են, իսկ
մեղուները առանց խայթոցի: Սյնտեղ ձեր ատելու-
թիւնը կ'ոչնչանայ և յաւիտենական սէրը կ'թագաւորէ
նրա փոխարէն:

Սյդ խօսքերն ասելիս նա զգում էր իր մէջ
ճշմարտութեան ոյժը: Հետաքրքիր ամբօխը հաւաք-
ւում էր շուրջը: Բայց ի՞նչ էին ուզում, ի՞նչ էին
սպասում նրանից... Սյդ բոպէին յանկարծ նա հաս-
կացաւ, թէ ինչու էին ժամանակների մարդարկներից
շատերը, մաքուր ու աղնիւ սիրտ ունենալով հան-
դերձ, վերջ ի վերջոյ դարձել ստախօսներ ու
խաբեբաներ: Նա իր մէջ մի ուժեղ պահանջ էր
զգում հրաշք գործելու և գրանով իր հզօրութիւնը
ցոյց տալու: Բայց ի՞նչպէս և ի՞նչ հրաշք... Հարկաւոր
էր մտածել: Եւ նա մտածում էր, խորասուզուած
մտածում էր... Ահա նրա առաջ կանգնած է անթիւ,
անհամար մի բազմութիւն: Թէ՛ ձեր, թէ՛ մանուկ,
թէ՛ կին, թէ՛ աղամարդ—բոլորն էլ մի առանձին
ախնածութեամբ նայում են նրա վրայ: Չկան այլևս
նրան ծաղրողներ, չկան և արհամարողներ: Բոլորն
էլ հաւատում են նրան: Եւ այդ ժամանակ նա
հազիւ լսելի ձայնով մրմնջում է.

«Խաղաղութիւնն ամբողջ աշխարհին...»

Այդ բառերը թռան անցան բերնից բերան: Անա լսուեց հանդիսաւոր երգ: Զատկի օրն էր: Նա զիտէր, որ բազմութեան մէջն է և իր հիւանդ մայրը: Նա մօտեցաւ նրան, ձեռքը դրեց գլխին և բացականչեց՝ կանգնիր: Հիւանդը կանգնեց և քայլել սկսեց, բայց նա ոչ թէ առաքեալի մայրն էր, այլ Յիսուս Նազովրեցին: Լսուեց երկնային երաժշտութիւն, հնչեց մանկական քնքուշիկ ձայնը. «Քրիստոս յարեալ...»:

Այդ բոպէին ճանապարհորդը զարթնեց քնից: Երազ էր նրա տեսածը: Բայց ինչ խորհրդաւոր երազ... Նա մի առանձին թեթեւութիւն և ներքին ոյժ գգաց իր մէջ: Նրա աչքին ծիծաղելի դարձան այն փիլիսոփաները, որոնք աշխատում էին մտածելով գտնել աշխարհի փրկութիւնը: Ոչ, դրա համար հարկաւոր են թեւեր, արծիւային ուժեղ թեւեր, հարկաւոր է աստուածային ոյժ: Այդպէս էր մտածում նա և նրա մտքերը լուսաւորում էին, նրա աչքերը բացւում: Նրա շուրջը տիրում էր մի առանձին կենդանութիւն: Օդն էլ կարծես լեզու էր առել և խօսում էր: Նա սկսեց լսել. նրա ականջին կարծես հնչում էր մի հին բարեկամի ձայնը, բայց դա ինքը հայր Աստուածն էր, որ խօսում էր իր որդու հետ...

Ինչպէս տեսանք խաղաղութեան իդէան է այդ նօլէլայի զլխաւոր հիմքը կազմում, բայց նա մի այնպիսի միստիկական մթնոլորտով է շրջապատուած, որ դժուար հասկանալի է և ուրիշ

ենթադրութիւնների էլ առիթ կարող է տալ: Նրա մէջ բաւական նկատելի կերպով արտայայտուել է հաուպամանի անհատական հոգեբանութիւնը, նրա ճանապարհորդական տպաւորութիւններն ու դիտողութիւնները: Այստեղ հաուպամանը իր աշխարհահայեցողութեամբ որոշ չափով մօտենում է Ժան Ժակ Րուսսօին, մայր բնութեան մէջ որոնելով մարդկային փրկութեան ճանապարհը...

Դ.

Սօցիալական դրամաներից առաջինը Այշալայի Vor Sonnenaufgang է, որի մէջ ակրնյայտնի կերպով նկատուում է Ֆրանսիական նատուրալիստների և իտալական մարդաբանների (Լօմբրոզօ և նրա հետեւողները) ազդեցութիւնը: Այստեղ բաւական ուժեղ դոյներով պատկերացրած է Ժառանգականութեան ազդեցութիւնը, որի շնորհիւ սերունդից սերունդ են անցնում մարդկային լաւ ու վատ յատկութիւնները, որի միջոցով որպիները ծնողների և թոռները պապերի մեղքերն են քաւում: *)

Ինչպէս յայտնի է, իտալացի հոգեբան Լօմբրոզօն և նրա համախոհները պնդում են, թէ ոճրագործը ներկայացնում է մարդաբանական մի առանձին տիպ, որը բնորոշում է գանկի, ուղեղի և ջղերի յատուկ շեղումներով, թէ ոճրագործները ի բնէ նշանակուած են լինում ոճիրներ կատարելու

*) Այդ մասին տես Ր. Վ. Բուրդուղեանի գեղեցիկ գրքից՝ «Ճառանգականութիւն և դաստիարակութիւն»:

և թէ առհասարակ մարդիկ իրանց բարոյական ու ֆիզիքական յատկութիւններով պարտական են ժառանգականութեանը, պարտական են իրանց ծնողներին—նախահայրերին: Բայց ուրիշ դիմաւորականներ բաւական հիմնաւոր կերպով ցոյց են տուել, որ այդ հարցում միայն ժառանգականութիւնը չէ դեր կատարողը, այլ նաև միջավայրն ու սոցիալական պայմանները:

Ահա այդ երկու հակառակ ուղղութիւնների մէջ է դեղերում հաուպաման: Նա պատկերացնում է ժառանգական արբեցողութեան—ալկոհոլիզմի կորստաբեր հետեանքները, բայց միևնոյն ժամանակ սեղ է տալիս և սոցիալական հանգամանքներին: Այդ իրողութիւնն աւելի պարզելու համար վերջնէք դրամայի բովանդակութիւնը:

Հարուստ գիւղացի է Կրաուզէն: Նա ունի երկու աղջիկներ, որոնցից մէկը՝ Մարթան ամուսնացած է ինժիներ չօֆմանի հետ, իսկ միւսը՝ Հեղինէն դեռ ամուրի է: Արբեցող է Կրաուզէն, արբեցող է և նրա ամբողջ ընտանիքը: Ժառանգական ախտը կորստաբեր աղբեցողութիւն է ունենում: Մարթան միշտ մեռած երեխաներ է աշխարհ բերում: Այժմ էլ նա ծննդաբերութեան նախօրեակումն է, բայց մեծ ազահուլութեամբ խմում է օղին և սպասում երկունքի վախճանին...

Կրաուզէի մօտ պատահամբ հիւր է գալիս և Ալֆրէդ Լօթը՝ չօֆմանի դիմնադեական դասընկերը: Նրա նպատակն է՝ ուսումնասիրել տեղական բանւորների կեանքը, հաւաքել վիճակագրական

տեղեկութիւններ և այդ բոլորից մի զիտական աշխատութիւն պատրաստել: Նախկին ընկերների մէջ սկսում է խօսակցութիւն, որից երևում է, որ նրանք բոլորովին տարբեր ձանապարհներ են ընարել իրանց կեանքում, որ բոլորովին տարբեր համոզմունքներ ունին, տարբեր գաղափարներ են փայփայում:

«Միժողել էր մեր այն ժամանակուայ ցանկութիւնը, ասում է չօֆման. Ամերիկա գաղթել և մի օրինակելի պետութիւն հիմնել... չրաշալի միտք էր էլ ի՞նչ ասել կուզե...»

Լօթը պատասխանում է, թէ ճիշտ որ այն ժամանակ նրանք չէին նախատեսել, չէին կշռադատել դործի մեծ դժուարութիւնները, բայց այնուամենայնիւ նրանց այդ ցանկութիւնն աւելի բարձր աւելի գնահատել էր, քան թէ միւս ուսանողները դարեջուրն ու խրախճանքը:

Չօֆմանը յայտնում է, որ ինքն էլ համակրում է ժողովրդին, բայց կարծում է, որ ամեն բան իրա բնական ընթացքն ունի, որ երբէք չի կարելի ձակատով քարէ պատերը փուլ տալ. միշտ հարկաւոր է դործնական լինել և այլն:

Ունենալ այդպիսի դիտութիւն, ասում է նա Լօթին, այդպիսի եռանդ ու ընդունակութիւն և դառնալ բանւորական թերթի խմբագիր, բէյխասաղի կանդիդատ, հասարակ ամբօխի ներկայացուցիչ... Մի՞թէ խելացի բան է այդ...

Այո, խելացի չէր դա գաղափարազուրկ չօֆմանի տեսակէտով, որովհետև նրա համար ամեն բանից թանկ էր միայն կարիէրանն ու հարստութիւնը:

որովհետև նա արդէն կանգնած էր բուրժուական սանդուխքի վրայ և բարձրանում էր վերև ու վերև... Նրա հակումներն աւելի ակներև են դառնում, երբ լսում է, թէ Լօթը լուրջ մտադրութիւն ունի քարածուխի հանքերի բանւորական կեանքն ուսումնասիրել և այդ մասին մի շարադրութիւն գրել: Սյդ ուսումնասիրութիւնը, այդ շարադրութիւնը կարող էր ստուեր զցել և նրա անուանը, որովհետև նա էր այդ բանւորներին շահագործողը, նա էր այդ թշուառների քրանքի վաստակը վայելողը: Տօփմանը խնդրում է Լօթին թողնել իր մտադրութիւնը, վերջինս հրաժարւում է և երկու ընկերների ընդհարումն աւելի սուր կերպարանք է ստանում:

Սակայն միայն այդ երկու հակադիր տիպերը չեն ուշադրութիւն գրաւողը, այլ և Կրաուզէի ամբողջ ընտանիքը: Ինքը Կրաուզէն մի կուպիտ գիւղացի է, ալիօճօլիկ և այնքան ցինիկ, որ առփառից փաղաքշանքներ է ուղղում նոյն իսկ դէպի իր հարազատ աղջիկը, երբ վերջինս մօտենում է նրան գեանից բարձրացնելու: Նրա կինը՝ տիկին Կրաուզէն աչքի է ընկնում իր արտաքին պճնասիրութեամբ և կեղծ բնաւորութեամբ: Նա ամուսնուց յետ չի մնում արբեցողութեան կողմից և միևնոյն ժամանակ սիրաբանում է իր ազգական կակազ Կալի Հետ: Մեծ աղջիկը Մարթան այն աստիճան սիրում է ողբից ըմպելիները, որ նոյն իսկ երկունքի ժամանակ օղի է աղերսում...

Ընտանեկան այդ մռայլ շրջանում մի լուսաւոր բացառութիւն է կազմում կրտսեր աղջիկը՝ Նեղե-

նէն. նա բարեսիրտ ու ազնիւ է և իր մաքրութեամբ ձգտում է բարձրանալ ստոր միջավայրից:

Նա սիրում է ընթերցանութիւն, ասում է շրջապատող կեանքը և իր այդ յատկութիւններով կարողանում է գրաւել Լօթի ուշադրութիւնը: Լօթը թափանցում է նրա սրտի խորքը և սիրում է նրան: Նեղինէն էլ սիրում է Լօթին, և մի՞թէ կերող է չսիրել այդ էնտուզիաստին, որն իր մասին ասում էր.

«Ես կռիւ եմ մղում մարդկային բաղդաւորութեան համար... Ես երջանիկ կլինիմ, երբ ինձ շրջապատող բոլոր մարդիկ երջանիկ կզգան իրանց, ես հանդիստ կառնեմ միայն այն ժամանակ, երբ կվերանան աղքատութիւնն ու ստրկութիւնը, ձրնշուճն ու անբարոյականութիւնը...»

Մտառը սրտերի փոխադարձ սէրը օրէցօր աճում է: Բայց յանկարծ հիասթափւում է Լօթը, երբ բժիշկ Շիմմելյաֆենիդից լսում է ալիօճօլիկ Կրաուզէի ընտանիքի տխուր պատմութիւնը, երբ կասկած է ծագում, թէ Նեղինէն էլ կարող է ժառաղած լինել այդ աւերիչ ախտը:

«Սյս դրութիւնից ազատուելու երեք ճանապարհ կայ, ասում է նա բժշկին, կամ ամուսնանալ նրա վրայ և յետոյ... Սակայն դոյութիւն չունի այդ ճանապարհը... Կամ ինքնասպանութիւն գործել և միանգամայն հանդստանալ: Բայց մենք դեռ այդ աստիճանին չենք հասել... ուրեմն մնում է ապրել ու կռուել և շարժուել առաջ, առաջ...»

Եւ նա թողնում է Նեղինէին ու հեռանում, թէև բժիշկ Շիմմելյաֆենիդը բացատրում է, որ

ժառանգականութեան հետեանքները երբմն բուժելի են, որ զուրկ է չեղինէն չէ ենթարկուել ալիօհօլիզմի հետեանքին և այլն: Նա հեռանում է և այդպիսի վարմունքով մի անգամ էլ ցոյց է տալիս իր կամքի թուլութիւնը:

Իսկապէս դրամայի գլխաւոր հերոսն է Լօթը, բայց նա շատ թոյլ է դժագրուած, զուրկ է որոշ գաղափարից ու կամքից: Նա իր համոզմունքներով դեմօկրատ է, բայց չունի հաստատուն կամք իր նպատակն առաջ տանելու համար: Նա սիրահարուած է չեղինէի վրայ, բայց չունի քաջութիւն արդեւններն արհամարհելու, խոչնդոտներն յաղթելու:

Բաւական ուշագրաւ է Շիմմելյօֆենիդի տիպը, որը հակառակ է ամուսնութեան, կողմնակից է կանանց կատարեալ ազատութեանը: Նրա կարծիքների մէջ պարզ նկատուած է մի կողմից սօցիալիստ Բեբելի, իսկ միւս կողմից իդէալիստ Իբսէնի սղոյեցութիւնը:

Առանց չափազանցութիւնների մէջ մտնելու, կարելի է ասել, որ այդ դրամայի թերութիւնը մի ընդհանուր իդէայից զուրկ լինելն է, թէև նա ունի բելիէֆ պատկերներ ու տեսարաններ: Այդ տեսարաններն իրանց սպաւորութեամբ յիշեցնում են մասամբ Վօլայի երկերը, մասամբ էլ Տօլստօյի «Տղիութեան իշխանութիւնը» դրաման: Չէնց այդ էր պատճառը, որ առաջին ներկայացման ժամանակ այնքան աղմուկ բարձրացաւ *) նատուրալիստների և նրանց հակառակորդների մէջ:

*) A. von Hanstein: «Gerhart Hauptmann» եր. 3—4

հաուպտմանի սօցիալական աշխարհահայեցողութիւնը համեմատաբար աւելի ազդու ձևով է արտայայտուած Զուլստայնի «Die Weber» դրամայում, որի նիւթը վերցրած է անցեալի պատմութիւնից: Այդ դրաման մեծ խլրտում բարձրացրեց ոչ միայն Գերմանիայում, այլ և ուրիշ երկրներում: Իշխող դասակարգներն էին նրան հալածողները, յուզուած կապիտալիստներն էին նրա դէմ աղմուկ բարձրացնողները: Եւ այդ երեւոյթը որոշ չափով հասկանալի կգտանայ, եթէ աչքի առաջ ունենանք, որ «Զուլստայները» իսկապէս մի կենդանի բողոք է կապիտալիստների դէմ, մի ցնցող պատկեր է աշխատաւոր դասակարգի դրութեան:

Գործողութիւնը տեղի է ունենում Շլէզիայի լեռներում, 1844 թուականին: հաուպտմանը իր հօրից էր լսել այդ պատմական դէպքի մասին, իսկ յետոյ աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրել էր փաստը գրական աղբիւրներից: *)

Դրամայի առաջին գործողութիւնը պատկերացնում է ջուլստայների փող ստանալը գործարանատէր Իրայսիդերի դանձապահից: Զափազանց ազդու է

*) Մ. յդ ձնշուած, կեղեքուած ջուլստայների ապստամբութիւնը մանրամասն կերպով նկարագրուած է Հենրիխ Տրայչկէի «Deutsche Geschichte im neuenzehnten Jahrhundert» աշխատութեան V—րորդ հատորում: Իսկ 1885 թուականին լոյս տեսաւ տնտեսագէտ Մ. Ֆրէդ. Յիմմելմանի մծնօգրաֆիան՝ Beute und Verfall des Leinengewerbes in Schlesien» վերնագրով, որ հաուպտմանի լուրջ ուշադրութեանն արժանացաւ:

այդ տեսարանը. դանձապահը խստութեամբ ցոյց է տալիս իւրաքանչիւր ջուհնակի հաշիւը, վճարում է փողը, առանց ուշք դարձելու նրանց բողոքներին ու աղերսանքին: Թշուառները դողդողջուն ձեռքով վերցնում են փողը և հեռանում:

Բայց այդպէս չի վարուում ջուհնակ Բեկկերը:

Նա համարձակ կերպով յայտնում է, որ դա իրանց իսկական վարձատրութիւնը չէ, այլ միայն չնչին փշուանքներ, որ մի անգութ սղրուկ է գործարանատէր Իրայսիգերը և այլն: Մօտենում է Իրայսիգերը, բայց Բեկկերը դեռ շարունակում է իր արգար բողոքը: Վէճը սուր կերպարանք է ստանում: Բաղմութիւնն աւելանում է... չէնց այդ ըոպէին մի անսպասելի դէպք դրաւում է հաւաքուածների ուշադրութիւնը: Ութ տարեկան մի նիհարիկ երեխայ ուշաթափ գետին է փուռում:

Իրայսիգերը բարկանում է և կշտաբանք թափում ծնողների հասցէին, որ չգիտեն կարգին խնամել իրանց երեխաներին: Սակայն ծնողները չէին դէպքի պատճառը, այլ քաղցածութիւնը: Բեկկերի առաջարկութեամբ մի կտոր հաց են տալիս երեխային: Երեխան ազահութեամբ կլանում է հացը և հեռանում, իսկ գործարանատէրը դեռ շարունակում է յանդիմանել բանւորներին, դեռ խօսում է նրանց ապերախտութեան մասին...

Երկրորդ գործողութիւնը ընթերցողին տանում է Անգորգէի խրճիթը, որը պատկերացնում է ամենաձայրայեղ աղքատութիւնը իր ամբողջ էութեամբ:

Սյտեղ գալիս է ցնցոտիներով ծածկուած մի կաղ ու յղի կին և ալիւր աղերսում:

«Սրդէն մի քանի օր է, որ երեխաներս ոչինչ չեն կերեր», ասում է նա և դառն արցունք թափում աչքերից: Բայց իզուր, ամբողջ խրճիթում ուտելու ոչինչ չկայ և նա հեռանում է դատարկաձեռն:

Իրանից յետոյ գալիս է պահեստի զինւոր Մօրից Եգերը և սկսում է զովել զինւորական կեանքը և վատաբանել ջուհնակների դրութիւնը:

Նրա ներկայութեամբ խրճիթում սկսում են ծաշի պատրաստութիւն տեսնել, բայց ի՞նչ են ուտելու... Շան միս: Ծաշակում են այդ անսովոր կերակուրը և քիչ յետոյ ստամոքսի ցաւից դանդատում: Տեսնում է այդ ամենը Եգերը և սարսափահար լինում: Նա մեծ զայրոյթով է խօսում գործարանատէրերի մասին: Սձեր ու դահիճներ է անուանում նրանց: Զուհակները ուշի ուշով լսում են նրա ձառերն ու ոտանաւորները և նոյն իսկ ողևորում են, երբ նա գործարանատէրերի հասցէին ասում է.

«Դուք մարդասպաններ էք, դուք դահիճներ էք սատանայեական ցեղից: Բայց արդէն ժամ է հասկանալու, որ մեր ժամանակն էլ հասել է...»

Սյդ ըոպէին վեր է ցատկում ծերուկ ջուհնակը՝ Բաումերտը և ձեռքեր երկարացնելով, բացականչում է.

«Ահա տեսէք ինձ ի՞նչ են արել, իմ ինչն են թողել... Միայն կաշին ու ոսկորս... Ախ դուք դահիճներ սատանայեական ցեղից...»

Իրանից յետոյ զործողութիւնը տեղի է ունե-
նում գարեջրատանը: Այստեղ են հարուստ գիւղացին
և կոմսերի մօտ ծառայող անտառապահը:

Նրանք արհամարհանքով են վերաբերում դէ-
պի ջուլհակները... Նետզետէ ամբօխը մեծանում
է... Ջուլհակները սկսում են երգել իրանց սիրելի
երգը Իրայսիգերի մասին: Միջամտում են ժան-
դարձները, տեղի է ունենում ընդհարում...:

Այդ մօայլ ու մութ խորշերից, յնցող տեսա-
րաններից յետոյ, ընթերցողի առաջ պատկերանում է
զործարանատէր Իրայսիգերի շքեղազարդ սենեակ-
ները: Այստեղ խօսում են պաստօր Կիտելհատուղը և
ուսուցիչ Վայնհօլը:

Առաջինը պաշտպանում է Իրայսիգերին, իսկ
երկրորդը՝ բանւորներին:

Նրանց խօսակցութեան ժամանակ ներս են
մտնում Իրայսիգեր ամուսինները, իսկ դրսից լսում
է ջուլհակների ծաղրական երգը:

Զարմանում է Իրայսիգերը:

Երիտասարդ ուսուցիչը փորձում է պաշտպանել
ջուլհակներին, նկարագրում է նրանց թշուառ վիճակը,
նրանց սօփն ու կարիքները, բայց Իրայսիգերը աւելի
կատաղում է և պաշտօնից զրկում է բանւորների այդ
ինքնակոչ պաշտպանին: Նեղանում է ուսուցիչը:

Այդ բոպէին ներս է մտնում զործակատար
Պֆեֆերը և յայտնում է, որ ձերբակալուած է խառ-
նակիչ Եգերը:

Բերում են Եգերին, նա սկսում է համարձակ
կերպով խօսել ու վերաւորել թէ Իրայսիգերին և

թէ նրա զործակատարին. իսկ դրսում ամբօխն
աւելի է կատաղում... Նա վերջապէս ոստիկանու-
թեան ձեռքից խլում է Եգերին...

Իրութիւնը աւելի կրիտիկական է դառնում:

Իրայսիգերը կնոջ հետ կառք է նստում և
գաղանի կերպով փախուստի դիմում:

Քարերի մի ամբողջ տարափ է թափւում նրա
բնակարանի վրայ, ջարդում են ապակիներ ու դռները:
Սմբոխը ներս է լցւում, սկսում է թալանն ու աւերումը:
Այդտեղից ջուլհակները յաղթական արշաւանքով
ազատութեան երգեր երգելով, առաջ են դիմում:

Վերջին զործողութիւնը ծերուկ ջուլհակ Խիլզէի
խրճիթումն է տեղի ունենում: Նին դաւանանքի, Հին
բարոյականութեան ներկայացուցիչն է այդ ծերուկը:
Նա Տօլստօյի նման քարոզում է խոնարհուել չարինքի
առաջ, հնազանդուել թշնամու լծին: Նա ամբողջ
սրտով հակառակ է ջուլհակների ապստամբութեանը:
Նրա որդին, Գօթլիբը, տատանւում է Հին և նոր
համոզմունքների մէջ տեղը, իսկ Հարսը՝ Լուիզան
ամբողջ հոգով ապստամբների կողմնակից է: Ներս
են մտնում ջուլհակները Բեկկերի առաջնորդու-
թեամբ:

Վերջինս սկսում է համոզել Խիլզէին: «Ինչ որ
չեն տայ կամքով սև յօժարութեամբ, ասում է Բեկկեր,
կվերցնենք ոյժով ու բռնութեամբ...»

Բայց Խիլզէն մնում է անզրդուելի.

«Ռուք կհեռացնէք երկու զինւորի, նրանց
տեղ կգան տասը», պատասխանում է նա դառն ժպի-
տով և նստում իր ոստայնի առաջ:

Բայց այդ բուսակին սկսում է իրարանցում, լուում է զինւորների Հրացանաձգութիւն. գնդակը դալիս դիպչում է յամառ ծերուկին: Նա մեռնում է... Իսկ դուրսը լուում է Հազարաւոր ջուհակների միահամուռ երգն ու աղմուկը:

Իրանով վերջանում է զրաման: Ինչպէս տեսանք, նա զրեթէ լուսանկարչական ճշմարտութեամբ, միայն աւելի զեղարուեստօրէն, վերարտադրել է պատմական փաստը:

Նէնց այդ ճշտութիւնն է պատճառը, որ նա զուրկ է գլխաւոր Հերոսից:

Եթէ Հեղինակը ուղենար մի այնպիսի ձև տալ իր զրամային, ինչպէս, օրինակ, Շիլլերի «Վիլհելմ Տելլը», այն ժամանակ պիտի Հեռանար պատմական իրողութիւնից, որ ցանկալի չէր նրա Համար:

Ե.

Այժմ դառնանք ընտանեկան կեանքը պատկերացնող զրամաններին: Բուրժուական միջավայրն է այդտեղ գլխաւոր տեղ բռնողը, ԺԹ՝ դարի Հիւանդոտ տիպերն են ուշադրութիւն զրաւողը: Այն մթնոլորտը, որտեղ կատարւում է («Նաշտութեան տօնը»), որտեղ («Մենակ Մարդիկ») ապրում, սիրում ու ամուսնւում են, որտեղ («Կառապան Նենշել») ու «Միխաիլ Կրամերը» բաղդի անողոք Հարուածների են ենթարկւում, զբաղեցրել է և Իրսէնին ու ուրիշ հեղինակների: Սակայն նրանք բոլորովին այլ կերպ են պատկերացրել այդ մթնոլորտը, այլ կերպ են ներկայացրել ընտանեկան կօնֆլիկտը: Հաուպտման

այդ զրամաններում մեծ տեղ է տուել իր երիտասարդական տպաւորութիւններին:

1890 թ. սկզբում լոյս տեսաւ Հալբո-Նէան Գօնը «Das Friedensfest» զրաման, որը ազդու գոյներով պատկերացնում է ընտանեկան գժտութիւնը — այն անվերջ ընդհարումը, որ երբեմն տեղի է ունենում մարդու ու կնոջ, ծնողների և զաւակների մէջ:

Բժիշկ Շոլցի ընտանիքն է գործողութեան ենթական:

Շոլցը ունի չոր ու փակուած բնաւորութիւն և Հասկանալ չի ուզում իր կնոջն ու երեխաներին: Նրա կինը միշտ անճանգիստ է, միշտ արանջացող նրա աղջկիկը՝ 29 տարեկան Աւգուստան արդէն կորցրել է ամուսնանալու յոյսը, չարասիրտ է և միշտ կուռում է մօր կամ եղօր՝ Բոբերտի Հետ:

Շոլցը Հոչակուած բժիշկ է, չափազանց կրթուած, զարգացած: Իսկ նրա կինը զուրկ է այդպիսի կրթութիւնից և բոլորովին չի Հասկանում ամուսնու հոգեբանութիւնը:

Սկսում է ընդհարումն ու վէճ: Շոլցը դառնում է ջղային, եսասէր. երեխաները մեծանում են առանց խնամքի, առանց Հսկողութեան:

Վիլհելմը սկսում է երաժշտութիւն սովորել նա բաւական առաջադիմութիւն է ցոյց տալիս այդ ասպարիզում: Վիլհելմի մօտ յաճախ գալիս է նրա ընկերներից մէկը՝ մի զեղատեսիլ երիտասարդ:

Տիկին Շոլցը սիրաբանում է նրա Հետ, բայց շուտով այդ վարմունքը բացւում է և խանդոտ Շոլցը

հրապարակ է հանում իր կնոջ անհաւատարմութիւնը, խայտառակում է նրան, այդ առթիւ կռուում է իր որդու, Վիլհելմի հետ և ապա դառնայած սրտով թողնում, հեռանում է ընտանիքից: Նա աշխատում է օտարութեան մէջ փարատել իր ծանր վշտերը: Վիլհելմն էլ հեռանում է տանից: Մնում են ընտանիքի միայն երեք անդամները, բայց նրանք էլ չեն սիրում, չեն հասկանում միմիանց և շարունակում են դժտութիւնը...

Անցնում են երկար ու ձիգ տարիներ: Վիլհելմը ծանօթութիւն է հաստատում Բուխների ընտանիքի հետ, որ իւր ամբողջ էութեամբ, իր անդամների բարոյականութեամբ, Շօլցի ընտանիքի կատարեալ հակապատկերն է ներկայացնում: Այդ ընտանիքի զաւակն է Իդան, բարեսիրտ ու քնքուշիկ Իդան, որի վրայ սիրահարուած էր Վիլհելմը: Նա սիրում էր Իդային ամենաջերմ սիրով, ամենազեղուն զգայմունքներով, բայց մի մեծ ոճիր էր համարում նրա հետ ամուսնանալը, մի մեծ յանցանք էր համարում այդ անարատ ծաղիկը իր հիւանդոտ պարտէզում անկելը:

Այո, նա չի վստահանում ամուսնաթեան մասին մտածել, սակայն Իդայի սէրն այնքան խորն է, նրա մօր համակրանքը դէպի Վիլհելմը այնքան մեծ է, որ վերջապէս տեղի է ունենում նշանադրութիւնը:

Մտանում է ծննդեան ատնը: Տիկին Բուխները և Իդան համոզում են Վիլհելմին, որ նա վերադառ-

նայ հայրական տունը, հաշտուի ծնողների, եղբոր ու քրոջ հետ:

Վիլհելմը հետևում է նրանց խորհրդին, տեղափոխւում է մօր մօտ: Այդ ժամանակ Շօլցն էլ վեռագառնում է օտարութիւնից: Իդայի հրեշտակային վարմունքը, տիկին Բուխների դեղեյիկ օրինակը ազդում է Շօլցի ընտանիքի բոլոր անդամների վրայ: Նրանք մեղմանում, փափկանում են, նրանց զգացմունքները առժամանակ քնքշանում են և տեղի է ունենում հաշտութեան սրտաշարժ տեսարանը: Բոլորն էլ յուզուած են, բոլորն էլ զգացուած...

Բայց երկար չէ տևում այդ դրութիւնը:

Եսասէր Շօլցը իսկոյն հարցնում է իր սիրելի ծառայի՝ Փրիէբի մասին, ուզում է առանձնանալ ու խօսել նրա հետ: Այդ բանը դուր չի գալիս նրա կնոջը, որ ատելով ատում է Փրիէբին: Երկու եղբայրների մէջ էլ վէճ է բացւում: Երկուսն էլ համոզուած են, որ իրանց կեանքը թունաւորուած է, երկուսն էլ զիտեն, որ իրանց պապզան դառն է լինելու, բայց զանազան ձանապարհներ են ընտրում դրա դէմ կռուելու: Յինիկ Բոբերարը զիտէ, որ ինքը հիւանդոտ է, որ իր կեանքում ոչ մի նպատակի ծառայել չի կարող և նա հաշտուում է այդ իրողութեան հետ: Վիլհելմը ընդհակառակը իդէալիստ է այդ հարցում: Նա ուզում է կռուել իր ձակատագրի դէմ, ձգտում է քաղցրացնել իր ապագան: հրեշտականման Իդան է լինելու նրա ուղեցոյցը...

Ամենաչնչին պատճառից սկսում է դրանց վէճը, որին մասնակցում են ընտանիքի բոլոր

անդամները: Նին համոզմունքը, մոռացուած հակա-
կրանքը նորից ասպարէզէ գալիս... Շօքի յուզմունքն
այն աստիճանի է հասնում, որ նրան թուում է թէ
Վիլհելմը ուզում է նորից ծեծել նրան:

Նա ուժասպառ ընկնում է անկողնու վրայ:
Ուղարկում են բժիշկի յետեից:

Այդ միջոցին բացատրութիւն է տեղի ունե-
նում Իգայի և Վիլհելմի մէջ: Վիլհելմը հրաժար-
ւում է ամուսնանալուց և յուսահատ բացական-
չում է.

«Մի՞թէ մենք էլ այսպիսի ընտանիք պիտի
հիմնենք...»

Ոչ, սիրելիս, պատասխանում է Իգան, դու
իմս ես... իմս ես լինելու յաւիտեան...»

Զգացմունքը յաղթող է հանդիսանում: սիրա-
տենչ զոյգը զրկախառնում ու համբուրում է,
իսկ հարեան սենեակից լսում է տիկին Շօքի
լացն ու աղաղակը.

«Մեռա՛ւ իմ ամուսինը, իմ խեղճուկ ամու-
սինը մեռա՛ւ...»

Այդ միջոցին դուրս է վազում Աւգուստան և
յանդիմանական ձայնով հարցնում է Վիլհելմից.

«Ի՞նչ, աստ, ո՞վ է այժմ մեղաւորը...»

Զայրանում է Վիլհելմը, բայց վարագոյրը ծած-
կում է զպրոջթի բռնկումը, հանդիսատես հասա-
րակութեանը թողնելով եզրակացնելու, թէ ինչն էր
յանցանքի պատճառը, ինչն էր ընտանեկան անվերջ
գժտութեան շարժառիթը:

Այդ գրաման ամենայն իրաւամբ հաուպտմանի
ամենայաջող գրուածքներից մէկը կարող է համա-
րուել *): Նա դերագանց է թէ նիւթի և թէ տեխ-
նիկայի կողմից:

Հաուպտմանի Մենսլ Մարդիլ «Einsame
Menschen» գրաման էլ անհամապատասխան ամուս-
նութեան պատկեր է տալիս: Բայց այստեղ անհա-
մապատասխանութիւնը բոլորովին ուրիշ դրոշմ է
կրում, քան միւս գրամաներում:

Այստեղ ընդհարումը տեղի է ունենում այնպիսի
մարդկանց մէջ, որոնցից իւրաքանչիւրն իր չափով
ազնիւ է ու մաքուր, անկեղծ է ու համոզուած:

Գլխաւոր հերոսը՝ Յովհաննէսը իրան մենակ է
զգում, որովհետեւ կինը՝ Կէրէն չի կարողանում հաս-
կանալ նրա մտքի ելեէջերը: Նա իր ամբողջ էութեամբ
սէր է, մի անարատ ու անջինջ սէր է, բայց սիրային
անձնութիւնը յազուրդ չի տալիս Յովհաննէսին:

Ուրիշ են նրա պահանջները...

Ծնողներ ու շրջապատողներն էլ չեն հասկա-
նում նրան:

Յայանում է ուսանողուհի Աննան, հասկանում
է այդ պահանջները և գրանով գրաւում Յովհաննէսի
սիրան ու խելքը... Սակայն շուտով նա էլ հեռանում
է, նորից հոգեկան մենակութեան մէջ թողնելով
Յովհաննէսին: Յուսահատութիւնը աւելի զօրեղա-
նում է:

*) Adalbert von Hanstein. «Gerhart Hauptmann»
եր. 21.

Նա լճի ալեքներէ մէջ է որոնում իր փրկութիւնը...

Սյստեղ էլ ընտանեկան կատաստրոֆ, այստեղ էլ մարդկային զոհ: Սակայն այդ զոհն իր ամբողջ հութեամբ տարբերում է ընտանեկան կարգերի այդ տեսակ զոհերից...

«Մենակ մարդիկ» դրաման չափազանց տպաւորիչ, հետաքրքրաշարժ է, որովհետեւ նա իր մէջ պարունակում է հոգեբանական զարմանալի ճշտութիւն, տիպերի ըելիէֆ պատկերացումն և ժամանակակից հակադիր կարծիքները կնոջ ու ամուսնութեան մասին:

Գրանից ոչ պակաս հետաքրքրաշարժ է հաուպտմանի միւս դրաման, Կառապան Հենչէլ «Fuhrmann Henschel», որ լոյս տեսաւ 1898 թ.: Գործողութեան տեղը Հելլինակի ծննդավայր Շլեզիան է, իսկ նիւթը վերցրած է Հիւրանոցային կեանքից: Երևում է այստեղ մեծ դեր է կատարել հաուպտմանի մանկական տպաւորութիւնները իր հօր Հիւրանոցում:

Դրամայի գլխաւոր Հերոսը կառապան Հենչէլն է, որ իր կնոջ հետ ապրում է հսկայաշէն Հիւրանոցի նկուղում, որը և սեղանատուն է և ննջարան և ընդունարան: Բարի ու կենսուրախ է Հենչէլը, նրան համակրում են թէ Հիւրանոցում և թէ հարեանները:

Նա յաճախ հանաքներ է անում աղախին հաննէի հետ. մի առանձին մտերմութիւն է նկատուում այդ երկուսի մէջ:

Տեսնում է Հենչէլին կինը և խանդավառում, բայց որոշակի չի արտայայտում իր խանդը:

Սյսպէս անցնում են օրեր, ամիսներ: Ահա նա հիւանդ պառկած է անկողնում, սպասում է մահւան, բայց մահը չէ նրան սարսափեցնողը, այլ սիրեցեալ ամուսնու ապագան:

Հարու մաշ է լինում նրա զգայուն սիրտը, երբ պատկերացնում է Հենչէլին—փշաջած ու չարասիրտ հաննէի հետ ամուսնացած: Նա ջերմ աղերսանքով երգուեցնում է Հենչէլին չանել այդ կորստաբեր քայլը, իրա մահից յետոյ չամուսնանալ հաննէի հետ: Երգում է Հենչէլը, հանդիստ սրտով մեռնում է նրա կինը...

Սակայն երկար չէ տևում այդ ուխտը, հաստատուն չի մնում երգումը: Հաննէն իրան յատուկ սիրաբանութեամբ աւելի մօտենում է երիտասարդ կառապանին և վերջը ամուսնանում է նրա հետ: Բայց ամուսնութիւնն էլ վերջ չի դնում նրա թեթեամտութեանն ու քմահաճոյքներին:

Նա սիրային յարաբերութիւն է սկսում գարեջրատան ծառայի հետ և այդ բանն անում է բաւական ազատ կերպով, նոյն իսկ իր տան մէջ, իսկ միամիտ Հենչէլը դեռ հաւատում է նրան, դեռ շարունակում է սիրել անկեղծ սիրով:

Թէրևս այդ սերն է պատճառը, որ նա չի խանդավառում, երբ լսում է, թէ հաննէն դեռ ամուսնանալուց առաջ մի երեխայ է ծնել:

Հենչէլը գնում է հարբեցող պապի մօտից բերելու այդ անմեղ երեխային, որպէս զի սեփական

յարկի տակ, հարազատ զւաակի նման խնամ, ու մեծացնէ:

Իսկ հաննէն... Նա միայն կոպտութեամբ ու կշտամբանքով է պատասխանում ամուսնու այդպիսի բարութեանը: Դառնանում է ճէնչէլի սիրտը, կամաց-կամաց բացւում են նրա աչքերը, սկսւում է կասկածը...

Հաննէի անհաւատարութեան լուրը տարածւում է շրջակայքում:

Մի անգամ դարեջրատուն է մտնում ճէնչէլը. իսկոյն սկսւում է բամբասանքը հաւաքուածների մէջ: Շուկը հասնում է ճէնչէլի ականջին. վերաւորւում է նրա արժանապատւութիւնը: Այդտեղ է և ճէնչէլի նախկին ծառայ հաուֆէ: Նա յայտնապէս մի քանի մերկացումներ է անում հաննէի մասին: Ճէնչէլի բարկութիւնը հասնում է զայրոյթի, զայրոյթը՝ կատաղութեան: Նա բռունցքի հարուածներով դուրս է շարտում հաուֆէին:

Սակայն վէճն ու աղմուկը դեռ շարունակւում է...

Բարոյական այդ մեծ հարուածը ճնշում է ճէնչէլին, նա ընկձւում է: Նրա աչքին պակերանում է հանգուցեալ կնոջ դալուկ դէմքը, ականջին հնչում է նրա աղերսանքը՝ չամուսնանալ հաննէի հետ... Հապա երգումը... Ինչու ուխտադրուծ եղաւ նա: Ահա դրա պատիժը: Ահա քաւութեան խաչը: Հարկաւոր է տանել նրան:

Ճէնչէլի համար կեանքը կորցնում է իր արժէքը: Յուսահատութիւնը աճում է օրէցօր, ժամէժամ:

Երկուսից մէկը—ինքը կամ հաննէն պիտի մաքրէ ընտանիքի պատիւը: Բայց այդտեղ էլ նա է անում անձնագործութեան քայլը:

Վիրաւորուած պատուին նա զոհւում է իր կեանքը: Մի առաւօտ նրան մեռած են գտնում սենեակում: Նա կախ էր արել իրան...

Ցնցող տպաւորութիւն է թողնում այդ դրաման իր վերջաբանով, բայց անհասկանալի է նրա հերոսի ճէնչէլի թուլակամութիւնն ու երբեք ընաւորութիւնը: Եւ մի՞թէ բնաւորութիւն կարելի է համարել դրան... Նա սիրում է հաննէին, բայց չի հասկանում այդ բանը, երգւում է չամուսնանալ նրա հետ, բայց չի կատարում երգումը. նա խաբուած է, բայց շատ շուտ է զգում, վերջը իմանում է ճշմարտութիւնը, բայց կամքի ոյժ չունի իսկական յանցաւորին պատժելու և իր պատիւը արժանավայել միջոցով մաքրելու: Նա զրեթէ անտրտունջ զոհ է դնում ճակատագրի հարուածին: Այդպիսի բնաւորութեանը շատ քիչ է սագրում հերոս անունը:

Չնայելով այդ թերութեանը, բեմական մեծ արժանիքներ ունի «Կառապան ճէնչէլը», տպաւորութիւն թողնող շատ տեսարաններ ունի նրա բովանդակութիւնը: Ճէնչ այդ յատկութիւնների համար էր, որ Գերմանիայի քննադատներից ոմանք *) հառապատմանի զուխ գործոց համարեցին այդ դրաման:

Ընտանեկան դրամաների շարքում ամենաթոյլը կարելի է համարել «Միխայէլ Կրամերը»:

*) Տես «Das Les. Echo» 1899.

Այդ դրամայի գլխաւոր հերոսը՝ Կրամերը տաղանդաւոր նկարիչ է, որի համար գեղարուեստը մի մեծ սրբութիւն է, մի առանձին երեմնական աշխարհ: Մայր բնութեան ամեն մի գեղանի տեսարանը գրաւում է նրա հրապուրանքը: Մի անգամ ստացած տպաւորութիւնը մնում է շատ երկար, մինչև որ արտասովորի պաստառի վրայ:

Կրամերի բոլոր աշակերտներն ու ծանօթները յարգում են նրան. հասարակութիւնը խոստովանում է նրա տաղանդի մեծութիւնը: Սակայն այդ բոլորը ոչինչ է նրա համար. նա խոյս է տալիս առօրեայ շարքն երեւոյթներին, տեղի—անտեղի համակրական ցոյցերին:

Իսկական նկարիչն անապատական է, ասում է Կրամերը, նա միայնակ պիտի լինի, որպէսզի հասկանայ գեղարուեստի մրմունջները: Լաւն ու նշանաւորը զարգանում է միայն առանձնութեան մէջ...

Եւ նա հետեւում է այդ գաղափարին. նա մէկուսացած նկարում է Յիսուսի պատկերը փշէ պսակով և ոչ ոքի չէ ցոյց տալիս իր վեճին աշխատութիւնը:

Կրամերի արտաքին ձևերը կոպիտ են և սառը, բայց ոչ ոք չի վերաւորւում նրանից, որովհետև գիտեն նրա սրտի անկեղծութիւնն ու բարութիւնը:

Ահա այդպէս շնորհալի նկարիչը կարող էր խաղաղ ու երջանիկ ապրել, եթէ չլինէր մի հատիկ որդու—Արնօլդի կորստաբեր կենցաղավարութիւնը:

Երիտասարդ Արնօլդը խիստ պատժուած է բնութիւնից: Նա սապատաւոր է և հակակրեկի: Նա

վանող տպաւորութիւն է թողնում ամենքի վրայ: Նրանից խոյս են տալիս բոլորը՝ մանտանդ կանայք: Բարոյական այդպիսի դառն պայմաններում մեծանում է նա և հետզհետէ մեծ շնորք ցոյց տալիս նկարչութեան մէջ:

Արնօլդը տաղանդաւոր նկարիչ է լինելու, յաճախ ասում է հայրը՝ Միխայիլ Կրամերը:

Իսկ Արնօլդն ընդհակառակն անուշադիր է թողնում նկաչութիւնը և ամբողջապէս նուիրւում շուայտ կենցաղավարութեան:

Սառնասիրտ հայրը շարունակ յանդիմանում է նրան. առաջարկում է ուղղուել, բայց դրա համար գործնական ոչ մի միջոց ձեռք չի առնում:

Մայրական քնքոյշ հոգատարութիւնն ու քրոջ (Միխայիլնայի) խորհուրդներն էլ մնում են անհետեւանք:

Արնօլդը ամբողջապէս ընկնում է անբարոյականութեան մէջ: Ստախօսութիւնն ու հարբեցողութիւնը դառնում են նրա համար սովորական բան. նա դիշեր ցերեկ անց է կացնում զարեջրատներում, անբարոյական կանանց շրջանում: Նա աշխատում է դէթ այդտեղ ստանալ իր պահանջների յագուրդը:

Ուրիշ ի՞նչ կարող էր անել... չէ որ համապատասխան հասարակութիւնը խոյս է տալիս նրանից:

Նրա ամբողջ հրապուրանքը կենտրոնանում է զարեջրատան թեթևօտիկ—կօկետ աղջկայ վրայ:

Սակայն այստեղ էլ Արնօլդն իր տարօրինակ արտաքին ու ներքին յատկութիւններով ծաղր ու ծանակի առարկայ է դառնում:

Վերջապէս մի օր նա գարեջրատան հարբած յաճախորդների հետ ընդհարումն է ունենում: Նա ատրճանակով սպառնում է իրան վերաւորողներին. վերջիններս ընկնում են յետեւից: Արնօլդը փախչում է և ինքնասպանութեամբ վերջ է դնում իր դառն կեանքին:

Վերջին՝ չորրորդ գործողութիւնը Միխայէլ Կրամերի վիշտ ու հառաչանքի շղթան է կազմում:

Սյստեղ Հայրը մասամբ խոստովանում է իր սխալը, իր սառնութիւնը. նա յայտնում է իր նախկին աշակերտ Լախմանին, որ մահն արդէն մաքրեց որդու վրայ ծանրացած կեանքի կեղտը և այլն:

«Լախման, բացականչում է նա, մաքուր մեռաւ Արնօլդը, մաքրութիւն է արտայայտում նրա անշնչացած դէմքը. բայց ափսոս և հազար ափսոս. նա իր հետ գերեզման տարաւ մի տաղանդ, նկարչական մի մեծ տաղանդ:»

Դրանից յետոյ նա սկսում է իր երկար ու բարակ դատողութիւնները կեանքի և մահուան, գեղարուեստի և աստուածաբանութեան մասին:

Զափազանց խոր և լիրիքական են նրա մտքերը, բայց բոլորովին զուրկ դրամատիքական արժեքից:

Սյս բոլորից յետոյ կարծեմ հասկանալի պիտի լինի, թէ ինչ՞նչ Հասարակութիւնը սառնութեամբ ընդունեց իր սիրած հեղինակի վերջին դրաման:

Քննադատներից շատերը, տեխնիկայի և դրամատիքական գործողութեան բացակայութիւնը խոստովանելով, սկսեցին Դիոգինէսի լրագրողով բանաստեղծութիւն ու հոգեբանական խորութիւն որոնել:

սակայն շատերն այդ էլ չգտան և դառն յուսահատութեամբ բացականչեցին՝ «հաուպտմանի աստղը կարծես խոնարհոււմ է»:

2.

Չորրորդ կատեգորիայի երկերից, կոմեդիաներից յիշենք Կոլլեգա Կրամպտոնին:

1891 թ. աշնանային երեկոներից մէկն էր: Բերլինի Barnagsche Theater անունով թատրոնը լի էր խուռն բազմութեամբ. այդտեղ էր և հաուպտման: Ներկայացնում էին Մօլիերի «Ժլատը»: Երիտասարդ հեղինակի վրայ մեծ տպաւորութիւն թողեց ժլատութեան այդ արագիկամիկական տիպը: Նրա յիշողութեան մէջ զարթեցին հին ծանօթութիւններն ու տպաւորութիւնները և նա վճռեց մի կոմեդիա գրել:

Մի քանի շաբաթից յետոյ ցանկութիւնն արդէն իրականացած էր: *) «Կոլլեգա Կրամպտոն» «Kollege Crampton» էր նոր կոմեդիայի անունը:

Հերոսը պրոֆեսսոր Կրամպտոնն է: Նա յայտնի նկարիչ է, բայց դժբաղդ է զգում իրան: Սյստեղ էլ կինն է դժբաղդութեան պատճառը:

Վերջինս հարուստ ու նշանաւոր ընտանիքից է, բայց հոգեպէս աղքատ և չի հասկանում իր ամուսնուն, չի ըմբռնում նրա պահանջները: Դժբախդանում է Կրամպտոն, սակայն Յովհաննէս Յոկերատի նման ջուրը չի նետուում, այլ անձատուր է լինում արբեցողութեան. նա զինով ու գարեջրով է հանդցնում իր վիշտը...

*) Paul Schlenther: «Gerhart Hauptmann» եր. 154.

Առաւօտ է: Կրամպտօն զարթել է քնից: Հաւաքուել են աշակերտները և սպասում են նրա պատուէրներին:

Նա ամենից առաջ իր ծառայ Լէֆերին ուղարկում է գորգը գրաւ դնելու և գարեջրի համար փող ձեռք բերելու: Սյդ տեսարանը բնորոշում է Կրամպտօնի վիճակը՝ նրա արբեցողութիւնն ու նիւթական պայմանները:

Արբեցող է Կրամպտօն, բայց իր կոչմանն արժանի նկարիչ: Նա շատ բարձր է գնահատում գեղարուեստը և զայրոյթով է պատասխանում պատուէր տուողին, որը մեծամիտ տօնով է խօսում նրա հետ:

Ես նկարիչ եմ և ոչ ներկարար, բացականչում է Կրամպտօն:

Նա արհամարանքով է խօսում գեղարուեստից ձեմարանի մասին. ասում է, որ այնտեղ առաջ գնալ, ճաշակ ստանալ կարող են միայն նրանք, որոնք զիտեն ստորանալ ու հաճոյանալ, զիտեն իրանց վրձինը շարժել ուրիշների քմահաճոյքի համար: Նա ոգևորւած քաջալերում է ձեմարանից արձակուած Մաքս Ծորելէրին, բայց միևնոյն ժամանակ պատուիրում է միշտ բարձր պահել գեղարուեստը, չընկճուել ամբօխի կարծիքի առաջ:

Երբ մարդ մի շնորհալի գործ է ստեղծում, ասում է նա, այն ժամանակ ամեն մի փողոցային դատարկաբան թքում է այդ գործի վրայ և բացականչում. «Ի՞նչ էլ դատարկաբան գարձիր», բայց մի՞ թէ կարելի է լսել այդ բացականչութիւնը...

Կրամպտօն շատ զիւրահաւատ մարդ է և այդ

յատկութիւնը զնում է նրան ծիծաղելի դուրթեան մէջ:

Աշակերտներն ու պրօֆեսօրները անհամբեր սպասում են կոմսի դալուն...

Սպասում է Կրամպտօն, բայց նրա սպասելիքը բոլորովին ուրիշ է. նա կարծում է, թէ կոմսը այցելելու է ձեմարանը միայն նրա համար, որպէսզի տեսնի իր արհեստանոցը, տեսնի իր նկարները:

Նա մի առանձին պարծանքով է խօսում իր և կոմսի մտերմութեան մասին:

Սակայն ի՛նչպիսի հիասթափումն, ի՛նչպիսի ծիծաղաշարժ վախճան:

Կոմսը գալիս է և զնում առանց Կրամպտօնի անուան անգամ յիշելու: Բայց այդ դեռ բոլորը չէ:

Մի քանի օրից յետոյ Կրամպտօն զրկում է պաշտօնից իր արբեցողութեան ու խռովարար բնւորութեան համար:

Եւ կոմսը ստորագրում է հրաժարեցնելու թուղթը... Ծիծաղելի, բայց միևնոյն ժամանակ ցաւալի վիճակի մէջ է ընկնում պարծենկոտ Կրամպտօնը: Ամենքը թողնում հեռանում են նրանից: Նոյն իսկ կինը հեռանում է. նա զնում է ծնողների մօտ: Միայնակ է մնում Կրամպտօն և կորչում է կեանքի ալիքներում: Բայց շուտով նրան օգնութեան են հասնում նախկին աշակերտ Մաքս Ծորելէրը և աղջիկը— Գերտրուդան: Նրանք բարձրացնում են Կրամպտօնին կորստեան անդունդից և բերում են փրկութեան նաւահանգիստը:

Մաքսը ջերմ սիրով սիրում է Գերտրուդային: Նա ուզում է երախտագիտական զգացմունք ցոյց տալ ղէպի իր նախկին ուսուցիչը, ղէպի իր սիրեցեալն հայրը: Նրա մեծ եղբայր Ադօլֆը պեսիմիստ է և կարծում է, որ այլ ևս անկարելի է ուղղել Կրամպտօնին, անհնարին է նրան նորմալ ճանապարհի վրայ կանգնեցնել:

Բայց Մաքսը բոլորովին այլ կարծիքի է...

Երկար օրոնումներէից յետոյ նագտնում է Կրամպտօնին: Պատկեր նկարելու պատրուակով բերում է նրան իր բնակարանը և առաջարկում է աշխատել մի սենեակում, որ զարգարած է ճիշտ այնպէս, ինչպէս նրա նախկին առանձնասենեակը: Սկզբում զարմանում է, նոյն իսկ վերաւորւում է Կրամպտօնը, յետոյ երկմտում, իսկ վերջը երբ տեսնում է իր աղջկան, Գերտրուդային, հասկանում է, թէ բանն ինչումն է...

Նա մտում է իր ազատարարների մօտ... Նա փրկուած է... Բայց մինչև երբ...

«Ժլատի» ազգեցույթեան տակ է գրուած «Կօլլեգա Կրամպտօն», ուստի տեխնիքական մի որոշ նմանութիւն կայ նրանց մէջ: Սյդ երկու պիէսների մէջ էլ աչքի է ընկնում մի զլխաւոր գործող անձն, որի բարոյական թուլութեան շուրջը պատուու է ամբողջ գործողութիւնը: Երկուսի մէջն էլ շողկապուած են մարդկային հոգու կոմիկական ու տրագիկական յատկութիւնները:

Բայց կայ և մի խոշոր տարբերութիւն, որ այսպէս կարելի է բնորոշել. — «Ժլատը» բարոյագի-

տական կատակերգութիւն է, իսկ «Կօլլեգա Կրամպտօնը» — հոգեբանական:

Անսպասելի աջողութիւն ունեցաւ «Կօլլեգա Կրամպտօնը» և թերևս այդ աջողութիւնն էր պատճառ, որ հաուպտման հետևեալ տարին (1892) լոյս ընծայեց մի նոր կատակերգութիւն՝ «Մուշտակ» («Der Biberpelz») վերնագրով:

Դա ժամանակակից պաշտօնեաների կեանքից վերցրած մի պատկեր է: Ինչպէս յայտնի է այդ նիւթը զբաղեցրել է նաև Մօլիերին, Գօգօլին, Կլայստին և ուրիշ հեղինակների, բայց հաուպտման երբէք չի կարող համեմատուել դրանց հետ, որովհետև նրա աշխատութիւնը մի խակ գրուածք է, որ բացի ծիծաղաշարժ լինելուց ուրիշ առաւելութիւն չունի:

«Անցեալ նոյեմբերին լոյս թեսաւ հաուպտմանի մի նոր կատակերգութիւն «Կաշօն արաղաղ» (Der rote Hahn) վերնագրով: Դա իր բովանդակութեամբ «Մուշտակի» շարունակութիւնն է կազմում:

Սյդ նոր կատակերգութիւնը ներքին ոյժի և արժանիքի կողմից մի թոյլ աշխատութիւն է ներկայայնում:

Նկնց դա էր պատճառը, որ նա բեմական ոչ մի աջողութիւն չգտաւ և շուտով մոռացութեան տրուեցաւ:

է.

Հաուպտմանի դրամաներում դրեթէ միշտ մայրենի Շլեզիան է գործողութեան տեղը: Փամանակակից քաղաքական ու հասարակական հոսանքներն են զլխաւոր դեր խաղացողը: Ժիշտ է, նրա «Ջուլ-

հակներ» զրամայի նիւթը վերցրած է 40-ական թուականների կեանքից, բայց և այնպէս դժուար է նրան պատմական զրամայ համարել, որովհետև կատարուած անցքերը այնքան մօտ են մեր ժամանակներին, շոշափուած գաղափարը այնքան մեծ առնչութիւն ունի այժմեան սօցիալական կեանքի հետ:

Բայց հաուպտման վերջապէս մի թուիչը գործեց և դէպի այդ ասպարէզը, դէպի անցած-գնացած պատմական դէպքերը: Նա ունի յեղափոխող ոգի, ուստի և պատմութեան ծալքերից դուրս քաշեց յեղափոխական մի խոշոր դէպք: Գերմանական գիւղացիների ապստամբութիւնն է այդ դէպքը:

Ընթերցողին, երևի, յայտնի կ'լինի այն մեծ շարժումը, որ տեղի ունեցաւ ԺՁ դարում, որ խիստ ցնցեց պապականութեան հիմքը և մեծ հարուած հասցրեց կաթոլիկ եկեղեցուն:

Գերմանացիներն էին այդ շարժման ղեկավարը: Կուտերի արծարծած մտքերն էին նրա ոգին կազմողը: Բայց այդ շարժումը զուտ կրօնական բնաւորութիւն ունէր, իսկ հասարակ ժողովուրդը դեռ ճնշուած էր ազնուականութեան կողմից:

Վերջապէս լցուեց գառնութեան բաժակը, բռնկուեց գիւղացիների ապստամբութիւնը (1525 թ.): Սկզբում ապստամբուեցին Շուաբիայի գիւղացիները, իսկ յետոյ նրանց հետ միացան և միւսները: Շուտով ասպարէզ եկան այն նշանաւոր 12 յօգուածները, որոնցով գիւղացիները պահանջում էին՝ վերացնել ձորաութիւնը, թեթևացնել իրանց ծանր լուծը և ազատութիւն շնորհել գիւղական

համայնքին: Ահա՛ այդ յեղափոխական տարրի առաջնորդ գարձաւ Ֆլորիան Գէյլեր: Նա թողեց ասպետական պաճուճանքը, արհամարեց ազնուականի փառքն ու պարծանքը և եկաւ դռնհիկ ամբոխի գլուխն անցնելու: Հազարաւոր զոհեր ընկան այդ կռուում, բայց դժբաղդաբար շարժումը չը հասաւ իր նպատակին, յեղափոխութիւնը չ'տուեց ցանկալի հետեանք. զոհ գնաց և Ֆլորիան Գէյլերը:

Պատմութեան այդ տխուր էջը զբաւել էր և ուրիշների ուշադրութիւնը:

Ինչ տարիներ առաջ լոյս էր տեսել գեմօկրաս Վիլհելմ Յիմերմանի աշխատութիւնը այդ մասին, մի աշխատութիւն, որի իւրաքանչիւր տողից, իւրաքանչիւր բառից երևում է սէր դէպի ճնշուած ու հարատահարուած գիւղացիները: Սյդ գիրքը մինչև օրս էլ ղերմանացի բանւորների ընթերցանութեան ամենասիրելի նիւթերից մէկն է:

Պարզ է ուրեմն, թէ ինչու ճնշուածների կողմնակից հաուպտմանը կանգ առաւ այդ նիւթի վրայ: «Պլյորիան Գէյլեր» գրեց նա իր պատմական զրամայի վերնաղիւրը:

Սյդ զրաման բաղկացած է նախերգանքից և հինգ գործողութիւնից, որ տեղի են ունենում դիւաւորապէս Վիւրցբուրգ և Շվայնբուրգ քաղաքներում:

Նախերգանքը պատկերացնում է ասպետների վիճակը Վիւրցբուրգ ամրոցում, նրանց զայրոյթը 12 յօգուածի առթիւ և առհասարակ նրանց խորհրդակցութիւնը ընդդէմ ապստամբ գիւղացիների: Սյստեղ ասպետները այն կտրծիքն են յայտնում,

Թէ զիւղացիների շարժումը հակառակ է օրէնքին, հակառակ է բարոյականութեան ու նահապետական սովորութիւններին: Բայց այստեղ է նաև Գէյէրի գաղափարակիցը Հանշտայնը, որը պաշտպանում է զիւղացիներին, արդարացնում է նրանց շարժումը:

Յուշին գործողութիւնը պատկերացնում է զիւղացիների յաղթանակը, որ այնքան փառք ու մեծարանք է հասցնում Փլորիան Գէյէրին: «Որքան զլուիններ, այնքան կարծիքներ», բացականչում է հումանիստ րէկտօր Բեզէնմէյերը:

«Եղբայրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն», լսում է ամեն կողմից, բայց իւրաքանչիւրը իր չափով, իր տեսակէտով է ըմբռնում այդ բառերի իմաստը...

Մնացած չորս գործողութեան ընթացքում զարգանում է զիւղացիների կորստաբեր պարտութիւնը. որ և վերջանում է Գէյէրի մահով: Ստոր դաւաճանութեան զոհ է գնում ազատութեան պաշտպանը. ոչնչանում են նրա «սև խմբերը», հանդուժում է սպրտամբութեան կայծը:

Հառկատման իր այդ զրամայով ուղեցել է պատկերացնել մի խոշոր պատմական երեոյթ, մի գաղափարական հերոս, բայց զժբաղդաբար փորձն անաջող է անցել:

Ծիշտ է, զրաման տալիս է մի ամփոփ գաղափար պատմական անցքերի մասին, բայց շատ թոյլ է տեխնիկայի կողմից:

Գէյէրը տեղի են ունենում զլսաւորապէս բեմից դուրս, իսկ բեմի վրայ լսում են միայն անվերջ

պատմութիւններ ու դատողութիւններ զրանց մասին:

Հէնց այդ պատճառով էլ զրաման վէպի տպաւորութիւն է թողնում:

Իսկ զլսաւոր հերոսը Գէյէր զուրկ է սեփհական պատմութիւնից: Նա աւելի շատ խօսում է, քան թէ գործում: Նրա ներքին աշխարհը, նրա հոգու ելեէջները մնում են մթին քողով ծածկուած և ընթերցողը չի կարողանում որոշ գաղափար կազմել այդ զիւղացի դարձած ասպետ բնաւորութեան մասին:

Իսկապէս հերոսը, իր գործով պիտի ցոյց տայ հերոսութիւնը: Մնացած երեոյթները նրա շուրջը պիտի պտտուին: Սյդպէս են, օրինակ, Շեքսպիրի բոլոր հերոսները: Իսկ հառկատմանը ընդհակառակը պատկերացնում է շրջապատող հանդամանքներն ու գէպքերը, թերևս ենթադրելով, թէ զրանից կպարզուի և հերոսի կատարած գերը... Սխալ ենթադրութիւն...

Ը.

Գառնանք այժմ հառկատմանի այն երկերին, որոնց մէջ զերակշռող տեղը բռնում է միտախկական տարրը:

«Զրասոյդ գանգալը» և «Հաննէլէ» է զրանց անունը: Առանջինի նիւթը հիմնուած է ժողովրդական աւանդութեան վրայ, այն աւանդութեան, որի մասին խօսք է լինում և «Փլորիան Գէյէր» զրամայում:

«Երկրի մէջ տեղում, ասում է հումանիստ Բեզէնմէյեր, կախուած է մի մեծ զանդակ, որը երբ-

Եւիցէ պիտի հնչէ իր ձայնը, այնպէս բարձր, այնպէս ահարկու, որ նոյն իսկ խուլերը պիտի լսեն... Դուք կեղեքիչներ, մարդկային հողին ու մարմինը հարստահարողներ, բայց արեք ահանջներդ և հասկացէք, որ մօտ է ձեր ժամը...»

Դեռ ութսունական թուականներին հառապաման «Մեռած մետաղ» վերնադրով ոտանաւորի մէջ սիմֆօլական ձեով երգել է այդ զանգակի մասին, որի ձայնը ոչ ոք չի լսում այս աշխարհում:

Այդ միենոյն աւանդութեան մասին յիշուում է և Լիբերլինդ Ալեքսիի վէպերում, դրա վրայ է հիմնուած և Շիլլերի «Չանդակի երգը» և Գեթթէի նշանւոր բալլադան:

Սակայն դրանցից ոչ մէկը այնքան մտածելու նիւթ չէ պարունակում իր մէջ, որքան հառապամանի երկը, որ առաջին անգամ 1896 թ. լոյս տեսաւ և մինչև օրս մօտ 50 հրատարակութիւն է ունեցել, չհաշուելով օտար լեզուներով լոյս տեսածները:

Չանդակադործ ճենրիխն է գրամայի գլխաւոր հերոսը:

Նա ուզում է շինել մի անդուդական զանգակ, որը կարողանար հնչեցնել սէր ու եղբայրութիւն, ճշմարտութիւն ու արդարութիւն:

Սհա վերջապէս նրան պատակը իրադործուած է, տենչալի զանգակը պատրաստ է: ճենրիխը ուզում է բարձրացնել նրան սարերի զաղաթը, որտեղ ջրային ողին իր ձայնն է հնչեցնում, որտեղ անտառային օդին ձիւղից ձիւղ է թռչկոտում...»

Սհա մօտ է ճենրիխը իր նպատակին, մօտ է զանգակը սարերի զաղաթին: Բայց յանկարծ կառքը շուռ է զալիս և զանգակը գլորւում է անդունդ, դէպի լճի խորքը:

ճենրիխի ամբողջ սիրան ու էութիւնը այդ զանգակի մէջն էր. ընկնում է զանգակը, ընկնում է և նրա վարպետ ճենրիխը: Սհա նա սարերի ներքեւումն է, քարերը ջախջախել են մարմինը, բայց նա դեռ կենդանի է:

Նրա կիսաշունչ մարմինը դտնում է կախարդ Վիտիխան և բերում է իր խրճիթը, որտեղ ապրում է գեղանի յաւերժահարս Բաուտենդելայնը:

ճենրիխը տեսնում է նրան և կարծես իր մէջ մի անհասկանալի ոյժ է զգում. «Ես քեզ տեսել եմ դեռ շատ առաջ, ասում է նա Բաուտենդելայնին, ես լսել եմ քո ձայնը և հէնց այդ ձայնն էր, որ ուզում էի հնչեցնել տալ իմ զանգակի միջոցով, բայց այդ հրաշքն ինձ չյաջողուեց և ես լաց եղայ արիւն արցունքով...»

«Դու լաց եղար, զարմացած բացականչում է յաւերժահարսը, ի՞նչպէս, ես չեմ հասկանում, ի՞նչ է արցունքը...»

Այդպիսի անմեղութիւն ու անարատութիւն աւելի է հրապուրում ճենրիխին: Նա աղերսում է վերցնել իր ճակատից փշէ պտակը...»

Նրան այլևս չի դրաւում ոչ կռիւ, ոչ պատիւ և ոչ փառք: Հարկաւոր է միայն սէր, Բաուտենդելայնի սէրը: Իսկ յաւերժահարսը չի հասկանում այդ խորհրդաւոր խօսքերի իմաստը. չի հասկանում ճեն-

ըիխի տենչանքը: Նրա համար պարզ է միայն մի բան՝ Հենրիխի մահը մօտ է, նա վաղում է պառաւ Վիտիխին կանչելու: Բայց անտարբեր է Վիտիխը. նրան չի հետաքրքրում Հենրիխի զինակը. նա զիտէ, որ այդ է լինելու բոլոր մարդկանց փախճանը, ուստի և փոխանակ օգնութեան հասնելու, հանդարտ կերպով սկսում է կերակրել իր սիրելի կատուին և անտառային ողիներին...

Հենրիխին պատահած փորձանքի լուրը տարածւում է ամբողջ գիւղում: Գալիս են տեղական պատասօրը, ուսուցիչն ու սափրիչը դժբաղդ վարպետին գանելու... Երկար որոնումներից յետոյ նրանք հասնում են կախարդի խրճիթին և այդտեղից տանում կիսամեռ Հենրիխին:

Նրանց հեռանալուց յետոյ սկսւում է անտառների էլֆաների պարը: Փայլում է լուսինը ազօտ ձառագայթներով, հեռուից, շատ հեռուից լսւում է որոտ ու կայծակ: Վերջապէս գալիս է Բաուտենդելայնը և միանում պարողներին:

Գալիս է և անտառային ողին. որոտն ու ժեղանում է. թափւում է հեղեղ և էլֆաների քնքուշիկ երգեցողութեան հետ հնչում է նրա կոպտաձայն երգը: Գարնանային սիրոյ երգը: Լսում է Բաուտենդելայնը երգի ելեէջները և մնայլւում. նրա անարատ սրտում խօսում է սիրոյ առաջին զգացմունքը և թախիժի արցունքը քամւում է աչքերից:

Հանդարտւում է բնութիւնը. մենակ է Բաուտենդելայնը, բայց ահա ջոհորից դուրս է գալիս ջրային ողին՝ Նիկեյմանը:

Նա տեսնում է Բաուտենդելայնի տխրութիւնը, տեսնում է արցունքի կաթիլ նրա ձախ աչքում և բացականչում.

«Ո՛հ, ի՛նչ հրապուրիչ կաթիլ է դա, ինչ ցանկալի յակինթ. նրա մէջ երևում է ամբողջ աշխարհի թախիժն ու երջանկութիւնը: Սրբո՛ւսէ՛ այդ կաթիլն անունը»: Իսկ զարմացած Բաուտենդելայնը մըմնջում ինքն իրան.

«Այժմ ես հասկանում եմ, թէ ի՞նչ է արցունքը...» Սիրահարուած է Նիկեյմանը Բաուտենդելայնի վրայ. նա աղբսում է նրանից զնալ ջոհորի խորքը և այնտեղ ապրել միասին, սիրել միմեանց: Բայց յաւերժահարսը չի համաձայնում, նա ուզում է աշխարհ մտնել մարդկանց մէջ ապրել...

Իսկ վարպետ Հե՛նրիխը... Նա արդէն իր տանն է, նրա շուրջն են կինն ու երեխաները: Սնուպասեկի փորձանքը սզի մէջ է ձգել ամբողջ ընտանիքը: Տանջւում է Հենրիխը, բայց այդ տանջանքը աւելի հողեկան է, քան թէ ֆիզիքական: Նա դառն կսկիծով պատմում է կնոջը:

«Իմ շինած զանգակն անպէտք էր, Մապրա, լեռնային բարձրութեան համար: Նա անդունդ զլորուեց, որովհետև անկարող էր լեռներում արձագանք բարձրացնել...»

Հովտում նա կարող էր հնչել, իսկ լեռներում ո՛չ...

Մ. խ, եթէ յետ զար իմ երիտասարդութիւնը, այն ժամանակ ես նոր ոյժ, նոր եռանդ կունենայի այդ մեծ գործի համար...»

Մագդան հասկանում է չենրիխի հեռաւոր նպատակը, բայց անչափ սիրում է նրան և պատրաստ է օգնել ամեն բանում... Վերջապէս դալիս է պատտօրը և յայտնում է, որ մի համր կին ուղղւո՞ւմ է բժշկել չենրիխին:

Ներս է մտնում խորհրդաւոր բժշկուհին: Դա Բաուտենդելայնն է, միայն կերպարանափոխուած: Չենրիխի հետ մենակ մնալուն պէս նա բժշկում է նրան իր հրապոյրներով: Առողջանում է չենրիխը, որպէսզի «նորից ապրի, ցանկայ ու տոկայ, ձգտի ու ստեղծէ»... Նրա յանկարծակի առողջանալը հրաշք է թւում բոլորին... Բայց հրաշքի առարկան երկար չի մնում իր ընտանիքում, իր հարեանների շրջանում: Նա Բաուտենդելայնի հետ բարձրանում է սարերը, որպէսզի այնտեղ սկսէ իր մեծ գործը...

Չենրիխն աշխատում է լեռնային բարձրունքի վրայ: Նա թողել է տուն և հայրենիք, կին ու երեխաներ և ամբողջապէս անձնատուր է եղել Բաուտենդելայնի հրապոյրին: Նա անդուր, անդադար աշխատում է թղուկների ընկերակցութեամբ. նա ուզում է շինել մի չտեսնուած զանգակ, որի ձայնը հնչելիս պիտի լուրի սոխակների դայլայլիկը, աղանիւների մնչիւնը. ջերմ արցունքի աղբեղութեամբ պիտի հալչի մարդկային սրտի սառոյցը, պիտի ոչնչանայ կիրքն ու նախանձը, վիշտն ու տանջանքը... Նա այնպէս ոգեւորուած է այդ զաղափարով, որ մոռացել է ամեն բան...

Գալիս է պատտօրը նրան համոզելու, բայց չենրիխը մնում է անդրդուելի...

«Ձեր խօսքերն ինձ վրայ նոյնքան են ազդում, ստում է նա պատտօրին, որքան և ջրասոյգ զանգակը, որը այլ ևս երբէք զողանջելու չէ...»

«Կը զօղանջէ, վարպետ, կը զօղանջէ», կրկնում է պատտօրը և հեռանում...»

Չենրիխը շարունակում է իր գործը: Նա վերջ է վերջոյ կորցնում է մարդկային զգացմունքները, դառնում է դաժան ու անգութ:

Ժամանակը սահում է առաջ ու առաջ, իսկ չենրիխը դեռ սարումն է, դեռ աշխատում է իր զանգակի վրայ. նա արդէն բոլորովին մոռացել է ընտանիքին:

Բայց մի օր սարալանջում երևում են երկու մանկիկ, որոնք հագիւ հազ բարձրացնում են մի կաւէ անօթ: Չենրիխի զաւակներն են այդ մանկիկները. Մագդայի դառն արցունքներն է նրանց բարձրացրածը:

Չենրիխը ծանաչում է նրանց և մի տխուր նախազգացումով բացականչում:

«Ո՛ւր է Մագդան...»

«Նա մեռաւ... պատասխանում են երեխաները, նա խեղդուեց լժում և քեզ շատ բարև ուղարկեց...»

Բօթաբեր լուրը ցնցում է չենրիխին, նա յիշում է իր անցեալը պատկերացնում է անձուէր Մագդայի կրած տանջանքները և դառնացած սրտով անիծում է իր գործն ու հրապուրիչ յաւերժահարսին.

«Կորիր, հեռացիր ինձանից», ստում է նա Բաուտենդելայնին:

Եւ Բաուտենդելայնը հեռանում է և յուսահա-

տութեան մէջ անձնատուր լինում Նիկեյմանին—
Չրային ոգուն:

Նա նրա կինն է դառնում: Իսկ վիշտը հալածում է ճներիխին: Նա ընկճուած է ու յուսահատ և ուզում է մի անգամ էլ տեսնել իր սիրեցեալ Բառատենդելային:

Պառաւ Վիտիխան յայտնում է, որ այդ բանի համար պիտի իր ամբողջ կեանքը վճարէ: Ճներիխը համաձայնում է: Յայտնում է Բառատենդելայնը և հիացած գրկախառնում է ճներիխին: Վերջինս իր սիրեցեալ յաւերժահարսի գրկում փչում է վերջին շունչը, իսկ այդ բոպէին նրա ականջին հասնում է ջրասոյղ զանգակի զոզանջիւնը («այնքան տխրազին, այնքան խորհրդաւոր»): Այդ զոզանջիւնը վերջին անգամ զարդացնում է մեռած ճներիխի հաւատը, թէ պիտի բացուի արշալոյսը, պիտի փայլէ արեգակը...

Կարելի է ասել հառապամանի ո՛չ մի գրուածքը այնքան թեր և դէմ կարծիքներ չէ առաջացրել, ինչպէս «Ջրասոյղ զանգակը»: Շատերը նրան մինչև եօթներորդ երկինքը բարձրացրին, շատերն էլ մինչև ոչնչութեան անդունդը իջեցրին: Այս դասակարգի քննադատների շարքումն էր և Լև Տօլստոյ, որին դուր չէկաւ դրամայի ձևը:

Նա կարուկ կերպով յայտնեց իր բացասական կարծիքը: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարելի սպասել «Ի՞նչ է դեղարուեստ» ի հեղինակից...

«Ջրասոյղ զանգակից» ոչ պակաս միտտիկական է («ճաննելէ») ի բովանդակութիւնը:

Աղքատիկ ընտանիքի զաւակ էր ճաննելէն: Նրա մայրը կարիքների ծանր լծի տակ ճնշուելով մեռաւ, որը ու անտէր թողնելով մատաղահաս ճաննելէին: Կենդանի էր նրա խորթ հայրը քարտաշ Մարտերնը, բայց նրա մէջ արդէն վաղուց անհետացել էր հայրական զգացմունքը, գորովալի խնամքն ու հոգատարութիւնը: Նա գիտէր միայն հարբել, թափառել այս ու այն կողմ, տուն գալուն պէս ծեծել անմեղ ճաննելէին:

Ի՞նչ կարող էր անել դժբաղդ որբուհին: Նա տանջուեց, տանջուեց և վերջը վճռեց վերջ դնել իր կեանքին: Անվերջ թշուառութիւնը զարգացրել էր նրա երեւակայութիւնը:

Նրան թուում էր, թէ երկնային բարձրութիւնից միշտ դէպի իրան է կանչում մօր քնքոյշէկ ձայնը...

Ձմեռուայ ցրտաշունչ օրերից մէկն էր. ճաննելէն թողնում է տուն ու տեղ հետևում իրան կանչող ձայնին և ընկնում է լիճը: Բայց կատաղի ալիքները չեն կլանում անմեղ մարմինը: Մարդիկ օգնութեան են հասնում: Գիւղական ուսուցիչ Գօսվալդ խեղդւողին բերում է «Աղքատների ապաստարանը»: Դրանից յետոյ բաւական ազդու ձայնով պատկերացրած է ճաննելէի զառանցանքն ու մահը:

Հառապաման իր այդ դրամայով ուղեցել է ցոյց տալ, թէ ինչպէս ներկայ սօցիալական կեանքում, ընտանեկան չարաբաստիկ պայմաններում զօ՛հ են դնում նաև դեռահաս էակները, անմեղ զաւակները և նա միանգամայն հասել է իր նպատակին: Դրանից աւելի ազդու, աւելի ուժեղ ձևով չէր կարելի ներ-

կայացնել ընտանեկան թշուառութեան զոհուած
որբունու հոգեկան ամբողջ աշխարհը:

Ինչպէս դժուար չէր համոզուել առաջ բերած
օրինակներից, հաուպաման երբէք չէ հեռացել
նատուրալիզմի ընդձած ուղից, բայց միևնոյն ժա-
մանակ երբէք ամբողջապէս չէ կանգնել դրա վրայ:
Նրա գրուածքներում գրեթէ միշտ շախկապուած
են եղել բնականն ու դադափարականը, իրականն ու
վերացականը:

Նա ունի զգայուն սիրտ, որ միշտ հակուած
է դէպի թշուառների ու ընկուածների կողմը, ունի
կեանքը դիտելու ընդունակութիւն, որ հասկանում
է ներկայ սօցիալական ցաւը և կարողանում է զա-
տել դառն իրականութիւնը պատահական երևոյթ-
ներից. վերջապէս ունի գրելու մի առանձնայատուկ
շնորհք, որ զրաւիչ, նոյն իսկ հրապուրիչ է դարձ-
նում նրա երկերը:

Դեռ երիտասարդ է հաուպամանի գրիչը և
ընդունակ է ստեղծագործելու:

Եւ հասարակութիւնը սպասում է նրանից
աւելի մեծ երկեր...





«Ազգային գրադարան»



NL0169638

4916